

# ՄԵՂԱԴՐԱՆՔԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ: ԲՈՆԱԴԱՏՎԱԾ ԿԱՆԱՅՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԱԻԴԱ ՊԱՊԻԿՅԱՆ



Այս հոդվածը գրվել է Հայերի Բյուլ հիմնադրամի երևանյան գրասենյակի

«Երկրորդ համաշխարհային պատերազմը և կանայք»

փոքր հետազոտական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

# ՄԵՂԱԴՐԱՆՔԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ: ԲՈՒՆԱԴԱՏՎԱԾ ԿԱՆԱՅՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

## ԱԻԴԱ ՊԱՊԻԿՅԱՆ

Այս հոդվածում արտահայտված մտքերը հեղինակինն են և չեն  
արտահայտում Հայերի Բյուլ հիմնադրամի տեսակետը:

 HEINRICH BÖLL STIFTUNG

ԵՐԵՎԱՆ

Հարավային Կովկասի տարածաշրջան

Երևան 2020

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԱՆՑ ԲՈՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ	8
ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ (ՉՍԻՐՆԵՐ)	15
ՀԱՎԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՄ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂՆԵՐ ՈՒ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐ ՏԱՐԱԾՈՂՆԵՐ	18
«ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ»	23
ԴԱՍԱԼԻՔՆԵՐԻՆ/ԱՎԱԶԱԿՆԵՐԻՆ ՉՄԱՏՆՈՂ ԿԱՆԱՅՔ	24
ԱԶԱՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	26
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	30

Խորհրդային բռնաճնշումների ուսումնասիրությանը նվիրված գիտական գրականությունը որպես բռնաճնշումների թիրախ հիմնականում անդրադառնում է տղամարդկանց: Վերջին շրջանում, հատկապես արևմտյան գիտական շրջանակներում առանձնակի ուշադրության են արժանացել նաև խորհրդային բռնություններին ենթարկված կանայք: Այդ հետազոտությունները գլխավորապես նվիրված են կանանց կեցությանն աշխատանքային ճամբարներում կամ ամուսինների, հայրերի ձերբակալության արդյունքում նրանց նկատմամբ կիրառված խտրականության պատմություններին: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ կանանց նկատմամբ քաղաքական բռնությունների թեման դեռևս բավականաչափ ուսումնասիրված չէ: Հաշվի առնելով այդ բացը՝ հոդվածը նվիրված է պատերազմի ժամանակ Խորհրդային Հայաստանում կանանց նկատմամբ իրականացված բռնաճնշումների օրինաչափությունների ու առանձնահատկությունների վերհանմանը:

Առաջին մասում ներկայացված է պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանում կանանց քաղաքական բռնությունների վիճակագրությունը, որը թույլ կտա հասկանալ բռնադատվածների սոցիալական պատկերը և ինչ-որ չափով դուրս բերել կանանց նկատմամբ բռնությունների տրամաբանությունը: Այդ նպատակով օգտագործել են «Հազարաշեն» ազգաբնակչության հետազոտությունների կենտրոնի և Հայաստանի ազգային արխիվի համատեղ աշխատանքների շնորհիվ ստեղծված բռնադատվածների էլեկտրոնային շտեմարանը<sup>1</sup>, որը կազմվել է Խորհրդային տարիներին բռնադատվածների կարճված գործերի ֆոնդի հիման վրա: Հայաստանյան տվյալների շտեմարանը տեղեկատվական տեսանկյունից բավական ընդգրկուն է. այն ունի տվյալների մուտքագրման 29 դաշտ և հնարավորություն է տալիս, Նյուբը քանակական վերլուծության ենթարկելով, առավել համապարփակ տեղեկություն ստանալ բռնադատվածների մասին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների ԽՍՀՄ առանձին հանրապետությունների բռնաճնշումների մասին որակական և քանակական քիչ հետազոտություններ են հայտնի: Այնուամենայնիվ, հասանելի են Ռուսաստանի երկու առանձին շրջանների մասին ուսումնասիրություններ, և հայկական Նյուբը համեմատական վերլուծությունն արվել է Վ. Դյաչկովի<sup>2</sup> Տամբովի շրջանի և Մ. Նեչաևի<sup>3</sup> Մոլոտովի (ներկայիս՝ Պերմի) շրջանի պատերազմական տարիների

1 Խորհրդային Հայաստանում բռնադատվածների մասին տվյալների շտեմարան (1920-1953 թթ.), [www.armeni-atotalitaris.ru/](http://www.armeni-atotalitaris.ru/), 10.08.2020: Շտեմարանում ներկայումս հասանելի է միայն 1949թ. աքսորված քաղաքացիների տվյալները: Ամբողջ տեղեկատվությունը կայքում դեռևս հասանելի չէ, քանի որ տվյալների վրա դեռ աշխատանքներ են տարվում:

2 Дьячков В., Репрессии 1941-1945 гг.: Методология изучения и фактор военного социально-демографического развития Тамбовской области// Гуманитарные науки. История и политология, УДК 94 (47), 2011, сс. 258-267.

3 Нецаев М., Политические репрессии в Пермской (Молотовской) области накануне и в годы Великой Отечественной войны (1939-1945 годы), Вестник Челябинского государственного университета, 2014, № 22 (351), История, вып. 61, сс. 77-90.

բռնաճնշումների վերաբերյալ հետազոտությունների օգնությամբ:

Յոդվածի երկրորդ մասում արխիվային փաստաթղթերի վերլուծության միջոցով փորձել են վեր հանել բռնությունների մեխանիզմները և առաջադրված մեղադրանքի համապատասխանությունը հետաքննությանը: Քանի որ բռնադատվածների գործերը չեն կարող հանդես գալ որպես պատմական փաստի հավաստի աղբյուր, և դրանց միջոցով հնարավոր չէ վերակազմել բռնությունների հանգամանքները<sup>4</sup>, որպես խորհրդային առօրեականությունը լավագույնս արտացոլող աղբյուր դիտարկվել է նաև խորհրդային սոցիալական համակարգի մասին Յարվարոյան նախագիծը, որը պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ից Գերմանիա անցած խորհրդային քաղաքացիների հետ 1950-ական թթ. ԱՄՆ-ի պատվերով անցկացրած խորացված հարցազրույցների փաթեթ է<sup>5</sup>:

Ստալինյան շրջանի բռնությունների ռուսաստանյան տվյալների վիճակագրության վերլուծությամբ զբաղվել են մի շարք հետազոտողներ, որոնց թվում են Ս. Ուիթթոֆթը<sup>6</sup>, Մ. Իլիչը<sup>7</sup> և Լ. Լյագուշկինան<sup>8</sup>: Ազատագրված վայրերում պատիժ կրող անձանց մասին Ուիթթոֆթի ներկայացրած վիճակագրությունը խորհրդային շրջանի բռնաճնշումների ծավալների վերաբերյալ վերջին շրջանի առավել համակարգված ուսումնասիրություններից է: Սակայն, չնայած վիճակագրության մեջ ընդգրկված է նաև պատերազմական շրջանը, այնտեղ առանձնացված չէ գենդերային հարաբերակցությունը: Դրանցում տարանջատված չեն նաև քաղաքայիններն ու քրեորեն պատժվածները, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում քաղաքայինների վիճակագրությունն ուսումնասիրելու համար: Լյագուշկինայի և Իլիչի աշխատանքներն իրենց հերթին բացահայտում են Մեծ տեռորի<sup>9</sup> ժամանակ Գորկու (ներկայիս Նիժեգորոյան) շրջանում և Լենինգրադում (ներկայիս Լենինգրադի շրջանը և քաղաք Ստ. Պետերբուրգը) բռնադատվածների սոցիալական կառուցվածքը. Դրանցում առանձնացված են նաև բռնադատվածների գենդերային հարաբերակցությունը: Ի տարբերություն պատերազմի տարիների բռնությունների՝ Մեծ տեռորն այլ տրամաբանություն ուներ: Այդ շրջանում բռնությունների են ենթարկվել մեծամասամբ 40-անց տղամարդիկ՝ բռնությունների առաջին փուլում խորհրդային ղեկավարության բարձր կազմը և Կոմունիստական կուսակցության անդամներն, իսկ երկրորդ փուլում՝ հակասովետական տարրերը, որոնց մեջ մտնում էին

4 ՆԳԺԿ-ն ու դատախազությունն, ունենալով հետաքննությունը վարելու անսահման իշխանություն, հաճախ կեղծ գործեր էին կազմում: Դրա մասին է վկայում 1938 թ. նոյեմբերի 17-ին ԽՍՀՄ ժողովրդի և ՅամԿ(բ) Կ Կենտկոմի «Ձերբակալությունների, դատախազական հսկողության և հետաքննություն վարելու մասին» որոշումը, որում 1937-1938 թթ. զանգվածային բռնությունների մեջ մեղադրվում էին ԽՍՀՄ դատախազությունն ու ՆԳԺԿ-ը: Հղումը ըստ՝ Варфоломеева М., Особенности репрессивной политики Советской власти в конце 1930-х годов // Научные ведомости Белгородского государственного университета, № 1 (41), 2008, вып. 5, www.core.ac.uk/download/pdf/151214014.pdf:

5 The Harvard Project on the Soviet Social System Online, www.library.harvard.edu/collections/hpsss/index.html, 05.08.2020.

6 Stephen Wheatcroft, "The scale and nature of German and Soviet repression and mass killings, 1930-1945," *Europe-Asia Studies* 48, no. 8 (1996): 1319-1353.

7 Melanie Ilic, "The Great Terror in Leningrad: A Quantitative Analysis," *Europe-Asia Studies* 52, no.8 (2000): 1515-1534.

8 Лягушкина Л.А., Социальный портрет репрессированных в ходе Большого Террора (1937-1938 гг.): Анализ базы данных по книгам памяти Нижегородской области, www.kleio.asu.ru/2012/1/hcsj-12012\_30-43.pdf, сс. 30-42.

9 1937-1938 թթ. ԽՍՀՄ-ում իրականացված ամենամաշտաբային բռնաճնշումները, որի ընթացքում գնդակահարվել է մոտ 680 հազ. և ձերբակալվել 1.3 մլն մարդ: Տե՛ս՝ Robert Conquest, *The Great Terror: Stalin's Purge of the Thirties* (New York, 1968) և Земсков В., О масштабах политических репрессий в СССР, Политпрос, № 1 (66), 2012, www.politpros.com/journal/read/?ID=783 .

քաղաքական նախկին կուսակցությունների և ընդդիմադիր խմբերի անդամները, նախկին կուլակները, հոգևորականները, ազգային փոքրամասնությունները և քաղաքացիական պատերազմի մասնակիցները<sup>10</sup>: Կանանց բռնաճշումներն այդ շրջանում զգալիորեն զիջել են տղամարդկանց բռնաճշումներին: Մինչպատերազմյան շրջանում բռնադատված կանայք նույնպես հիմնականում պատկառելի տարիքի էին և Լենինգրադի շրջանում նախկին կամ գործող միանձնուհիներ և կրոնական սպասավորներ (երեցկիներ և սաղմոս ընթերցողներ) են եղել, իսկ Գորկիում բռնադատված կանանց մեծամասնությունը պատկանել է բանվոր դասակարգին: Կանանց նկատմամբ խորհրդային վաղ շրջանի բռնություններն ուսումնասիրություններից առանձնապես ուշագրավ են նաև Մ. Իլիչի<sup>11</sup> և Է. Մեյսոնի<sup>12</sup> որակական հետազոտությունները:

Մի շարք հետազոտողներ, այդ թվում Լ. Բորոդկինը, Պ. Գրեգորին և Օ. Խլեվնյուկը<sup>13</sup>, Է. Էփլբաումը<sup>14</sup>, Ա. Չերեմուխինը Մ. Գոլոսովի, Ս. Գոլբևի և Ա. Տիվինսկիի հետ միասին<sup>15</sup> բռնաճշումները քննարկել են որպես ԽՍՀՄ արդիականացմանը ծառայող տնտեսական գործիք՝ որպես հիմնավորում բերելով այն փաստը, որ ուղղիչ աշխատանքային հաստատությունները ԽՍՀՄ-ում տնտեսական կառույցներ էին համարվում, որոնք նպատակ էին հետապնդում ռացիոնալ օգտագործել դատապարտյալների աշխատանքը: ԽՍՀՄ քաղաքականության և առօրեականության հետազոտողների մեջ պետք է առանձնացնել նաև Ս. Կոտկինին<sup>16</sup>, Շ. Ֆիցպատրիկին<sup>17</sup>, Ս. Դեվիսին<sup>18</sup> և Թ. Ջոնսթոնին<sup>19</sup>, որոնց աշխատությունները ևս ծառայել են վերլուծությանը:

Ինչպես Մեծ տեռորի, այնպես էլ պատերազմի տարիներին ՆԳԺԿ-ի<sup>20</sup> կողմից թիրախավորվել են բռնադատվածների կանայք, որոնք խորհրդային իշխանության գնահատմամբ պոտենցիալ վտանգ էին ներկայացնում առնվազն այն պատճառով, որ կարող էին իշխանությունից դժգոհ լինել: Երբ 1970-ական թթ. գրող Ֆ. Չուևը Վ.Մոլոտովին հանդիպելիս հարցնում է կանանց և երեխաների նկատմամբ ծավալված բռնությունների նպատակի մասին, վերջինս նշում է, որ նրանք պետք է մեկուսացվեին, որպեսզի տարբեր տեսակի բողոքների տարածողներ չդառնային<sup>21</sup>:

10 Ջոնսթոնը ըստ՝ Melanie Ilic, “The Great Terror in Leningrad: A Quantitative Analysis.”

11 Melanie Ilic, “Women’s Experiences of 1937: Everyday Legacies of the Purges and the Great Terror in the Soviet Union,” In: *Women’s Experiences of Repression in the Soviet Union and Eastern Europe*. Routledge Studies in the History of Russia and Eastern Europe (London: Routledge, 2017), 13-53.

12 Emma Mason, “Women in the Gulag in the 1930s,” in the *Women in the Stalin Era*, ed. Melanie Ilic (Studies in Russian and East European History and Society, Palgrave, 2001), 131-150.

13 ГУЛАГ. Экономика принудительного труда, под ред. Л. Бородкина, П. Грегори, О. Хлевнюка, Российская политическая энциклопедия, Фонд Первого Президента России Б. Ельцина, М., 2008, с. 82.

14 Anne Applebaum, *GULAG: A History* (Doubleday, 2003).

15 Anton Cheremukhin et al., “Was Stalin necessary for Russia’s economic development?” *NBER Working Papers 19425*, National Bureau of Economic Research Inc. (2013).

16 Stephen Kotkin, *Stalin, Waiting for Hitler, 1929-1941*, V. 2 (New York: Penguin Press, 2017).

17 Фицпатрик Ш., Повседневный Сталинизм. Социальная история Советской России в 30-е годы: город, М., 2008.

18 Девис С., Мнение народа в Сталинской России, Террор, Пропаганда и Инакомыслие, 1934-1941, РОССПЭН, М., 2011.

19 Timothy Jonston, *Being Soviet. Identity, Rumor, and Everyday Life under Stalin 1939-1953* (Oxford University Press, 2011).

20 Ներքին գործերի ժողկոմ (ռուս.՝ НКВД):

21 Кречетников А., Как в СССР сажали жен и детей «изменников родины», [www.bbc.com/russian/features-40471460](http://www.bbc.com/russian/features-40471460), 05.07.2017.



Բացի այդ, հետապնդվում էին նաև թշնամական երկրների ազգություններին պատկանողները: Լրտեսության մեղադրանքով արխիվային գործերից մեկում Ոստիկանության Երևանի քաղաքային բաժանմունքի պետը Նույնպես հայտնում է, որ ՆԳԺԿ-ից իրենց հրամայված էր հասարակությունից մեկուսացնել Գերմանիայից ներգաղթածներին<sup>22</sup>: Դրանով ՆԳԺԿ-ը լրտեսության հնարավոր վտանգը չեզոքացնելուց բացի նաև մեկուսացնում էր մարդկանց, ի դեմս որոնց հնարավոր աջակից էր տեսնում գերմանական ուժերին: Ըստ այդմ, մի շարք հետազոտողներ, ընդգծելով նաև Մեծ տեռորի ժամանակ զգալի քանակությամբ երիտասարդ տղամարդկանց գնդակահարության փաստը, կարծում են, որ տեռորի քաղաքական նպատակները գերակշռում էին տնտեսականի նկատմամբ<sup>23</sup>:

Մյուս կողմից, թեև ըստ հետազոտողների, կանանց աշխատուժի օգտագործումը հնգամյա պլանի մաս չի կազմել<sup>24</sup>, կանանց նկատմամբ բռնությունները դիտարկելիս, քաղաքական պատճառներից բացի պետք չէ բացառել տնտեսական գործոնը: Տղամարդկանց՝ որպես աշխատուժի, քանակի զգալի նվազման պայմաններում և Կարմիր բանակին պարենով ապահովելու նպատակներից ելնելով՝ կանանց աշխատուժը կարող էր նպատակային համարվել: Ըստ Էփրաումի՝ ճամբարի ղեկավար կազմը շահագրգռված չէր իր պատասխանատվության տակ վերցնել կանանց՝ ելնելով տղամարդկանց համեմատ նրանց ֆիզիկական տկարությունից: Բայց 1941 թ. փետրվարին, Գուլագի<sup>25</sup> ադմինիստրացիան ՆԳԺԿ-ի տարածաշրջանային բոլոր ղեկավարներին հրաման էր ուղարկել կանանց Էտապներ<sup>26</sup> վերցնելու մասին՝ հղելով արտադրության այնպիսի ճյուղեր, որտեղ հնարավոր էր օգտագործել կանացի աշխատուժը (կարի, տեքստիլ, փայտամշակման, կոշիկի և այլ տիպի արտադրություն)<sup>27</sup>: Այսպիսով, կանանց պարագայում պատերազմի տարիներին պետք է նկատի ունենալ տեռորի տնտեսական և քաղաքական նպատակների համակցությունը:

22 ՉԱԱ, Ֆ. 1191, Ց. 4, Գ. 607:

23 Տե՛ս ԳՍԼԱԳ. Экономика принудительного труда, М., Նշվ. աշխ., էջ 82 կամ Anton Cheremukhin et al (2013), Նշվ. աշխ., էջ 32:

24 Emma Mason, Նշվ. աշխ., էջ 133:

25 Ռուս. կրճատ՝ “Главное управление лагерей”: ԳՈՒԼԱԳ-ը համակենտրոնացման ճամբարները կառավարող ադմինիստրատիվ կառույց էր: Այն գործել է 1929-1960 թթ. ընթացքում: Տե՛ս՝ ԳՍԼԱԳ. Экономика принудительного труда:


26 Պահակախմբով աբսոլյտ գնացող բանտարկյալների խումբ:

27 Эпльбаум Э., ГУЛАГ. Паутина Большого террора, Московская школа политических исследований, 2006, с. 297.

# ԿԱՆԱՆՑ ԲՈՆԱԾՆՇՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կանանց բռնաճշումների առանձնահատկությունները հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել 1920-1953 թթ. ՀԽՍՀ-ում բռնադատված մարդկանց ձերբակալությունների դինամիկան՝ ըստ սեռերի և տարիքի: Պատկերված դիագրամի (գծ. 1) տվյալները դուրս են հանվել ըստ ձերբակալության օրերի և ձերբակալության մասին որոշման օրերի<sup>28</sup>: Կազմված գործերում բռնադատվածների վերաբերյալ ոչ բոլոր տվյալներն են առկա, և աղյուսակում ներկայացված պատկերը խիստ մոտավոր է: Սա վերաբերում է հատկապես կանանց և երեխաներին, քանի որ նրանց ձերբակալման մասին շտեմարանում հաճախ տվյալներ չկան, ինչպես նաև մինչև 1930-ական թթ. գործերին, քանի որ դրանք երբեմն քիչ տվյալներ են պարունակում բռնադատվածի ճակատագրի վերաբերյալ: Պատերազմի տարիներին կանանց և երեխաների ձերբակալությունների վերաբերյալ տվյալները վերակազմված են դատապարտման կամ ազատման թվի հիման վրա: Բանն այն է, որ *չսիր*<sup>29</sup> կատեգորիայով բռնադատվածները հաճախ չեն ձերբակալվել աքսորվելուց առաջ, և այդ մասին տվյալները գործերում բացակայում են, և քանի որ հատկապես *չսիրների* թիվը պատերազմի տարիների բռնադատվածների ամբողջական թվի մեջ ծանրակշիռ է, չվերականգնելու դեպքում պատկերը խեղաթյուրված կստացվեր:

ՀԽՍՀ-ում ստալինյանի շրջանի ձերբակալության դինամիկան՝ ըստ սեռերի և տարիքի (գծ. 1)



Աղբյուր՝ Խորհրդային Հայաստանում բռնադատվածների մասին տվյալների շտեմարան (1920-1953 թթ.)

28 Բռնադատվելու թվականը ձերբակալություններով հաշվելը առավել նպատակահարմար և ճշգրիտ տարբերակն է: Դատավճռով բռնադատման տարին սահմանելն ունի որոշ սահմանափակումներ, քանի որ ոչ բոլոր ձերբակալվածների նկատմամբ է դատավճիռ կայացվել կամ դատավճիռը կայացվել է ոչ Նույն տարվա մեջ, ինչ ձերբակալությունը:

29 Մեղադրանքի ռուսերեն տարբերակից՝ «Члены семьи изменников Родины» կրճատ՝ ЧСИР.



Ըստ գծապատկերի, խորհրդային տարիների (1920-1953թթ.) կտրվածքով Հայաստանում, ինչպես և խորհրդային մյուս պետություններում, բռնադատված տղամարդկանց թիվը կանանց թվից անհամեմատ ավելի մեծ է <sup>30</sup>: Տղամարդկանց նկատմամբ բռնությունների զագաթնակետը ՀԽՍՀ-ում եղել է **1930թ.**, ավելի մեծ՝ **1937-1938 թթ.**՝ Մեծ տեռորի տարիներին և **1941-1942 թթ.**՝ համապատասխանաբար կազմելով մոտ **2320, 9283 և 2832**: Բռնադատված կանանց ձերբակալության դիմամիկան որոշակիորեն արտացոլում է տղամարդկանց ձերբակալությունների պատկերը: Մասնավորապես, դիագրամի վրա կանանց բռնադատման երկու զագաթնակետ կարելի է տեսնել՝ նույն Մեծ տեռորի տարիներին (**185** հոգի) և երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին տարիներին (**498** հոգի)<sup>31</sup>: Սակայն եթե բռնադատված տղամարդկանց թիվն առավելագույնի է հասնում Մեծ տեռորի տարիներին, ապա Հայաստանում կանանց նկատմամբ բռնությունները հիմնականում ծավալվել են պատերազմի տարիներին: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բռնադատված կանանց թիվը **1941-1945 թթ.** ընթացքում կազմել է 649 հոգի: Այսինքն, պատերազմի տարիներին բռնադատված կանայք կազմում են Ստալինյան շրջանում խորհրդային Հայաստանում բռնադատված կանանց (մոտ 1270 հոգի) **51%-ը**: խորհրդային Հայաստանում և Ռուսաստանի Տամբով և Մոլոտով շրջաններում բռնադատված կանանց համեմատական վերլուծությունը նույնպես հուշում է, որ պատերազմի տարիներին Հայաստանում կանանց նկատմամբ բռնություններն ավելի ուժգին էին իրենց դաժանությամբ (*աղ. 1*):

*1941-1945 թթ. բռնադատված կանանց թվաքանակն՝ ըստ տարածաշրջանի (աղյուսակ 1)*

Տարածաշրջան	Բնակչության թիվ	Բռնադատվածների ընդ. թվաքանակ (բաց.)	բռնադատված կանանց թվ. (բաց.)	Բռն. կանանց թվ. (%)
ՀԽՍՀ	1282338	5026	649	12.90%
Տամբովի շրջան	1765923	2000-3000	≈306	12.30%
Մոլոտովի շրջան	2087900	5067	≈625	12.30%

*Աղբյուրներ՝ 1939 թ. ԽՍՀՄ մարդահամար: Բնակչության ազգային կազմն՝ ըստ ԽՍՀՄ հանրապետությունների<sup>32</sup>*

*Տամբովի շրջանի 1939 թ. մարդահամար և բռնադատվածների մասին տվյալներ<sup>33</sup>*

*Մոլոտովի շրջանի մարդահամար՝ ըստ Մ. Նեչաևի<sup>34</sup>*

*խորհրդային Հայաստանում բռնադատվածների մասին տվյալների շտեմարան (1920-1953 թթ.)*

*Պերմի (Մոլոտովի) շրջանի բռնադատվածների շտեմարան<sup>35</sup>*

30 Դիագրամում ներկայացված են նաև բռնադատված երեխաները, որոնք աքսորվել են իրենց ընտանիքների հետ միասին որպես «հայրենիքի դավաճանի ընտանիքի անդամ»: Երեխաներն ընդգրկված են գրաֆիկի մեջ, քանի որ երկրորդ աշխարհամարտի տարիներին այդ կատեգորիայով աքսորվածների թիվը բավական ծանրակշիռ է, և նրանց չընդգրկելը կանդրադառնար գրաֆիկի դիմամիկայի վրա:

31 Պատերազմի տարիներին, ի տարբերություն տղամարդկանց, որոնց թվաքանակն ավել է 1941-42թթ., կանայք ավելի շատ բռնադատվել են 1942-43 թթ.:

32 Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения по республикам СССР, РГАСРФ, Ф. 1562, Оп. 336, Ед.хр. 966-1001 (Разрабочная таблица ф. 15А. Национальный состав населения по СССР, республикам, областям, районам). հղումն ըստ՝ [www.demoscope.ru/weekly/ssp/sng\\_nac\\_39.php?reg=6&fbclid=IwAR3I-anW0TD7t0xFtvtz86ZGIIxho6BsmIAeM1-rxqnBFWCcb8epnnISROs](http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_39.php?reg=6&fbclid=IwAR3I-anW0TD7t0xFtvtz86ZGIIxho6BsmIAeM1-rxqnBFWCcb8epnnISROs).

33 Сведения о численности населения городов и районов Тамбовской области по данным переписи 1939 г., ЦДНИТО, Ф. 1045, Оп. 1, Д. 2040, Л. 16.

34 Нечаев М., նշվ. աշխ., с. 78.

35 Жертвы политических репрессий. Территория Пермского края 1918-1980х гг., [www.permgaspi.ru/repress/](http://www.permgaspi.ru/repress/).

Համեմատության համար ըստ Վ. Դյաչկովի<sup>36</sup> Տամբովի շրջանում բռնադատվածների տվյալների շտեմարանի հիման վրա դուրս բերած աղյուսակի, որտեղ բռնադատվածները բաշխված են ըստ սեռերի, չնայած Տամբովի շրջանում 1935-1941 թթ. (ժամանակային այդ կտրվածքն առանձնացրել է Դյաչկովը) բռնադատվել է 261, իսկ 1941-1945 թթ. 101 կին, պատերազմի տարիներին կանանց հաշվեկշիռը տղամարդկանց նկատմամբ (12.3% և 87.7% համապատասխանաբար) զգալիորեն աճել է նախապատերազմյան տարիների համեմատ (5.5% և 94.4%)՝ 4-7%-ից հասնելով մինչև 12%<sup>37</sup>: Սա նշանակում է, որ չնայած Տամբովի շրջանում նախապատերազմյան տարիներին բռնադատված կանանց թիվը գերազանցել է պատերազմի տարիներին բռնադատված կանանց թիվին, կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը զգալիորեն փոփոխվել է՝ բռնադատված տղամարդկանց թվի կրճատման հաշվին: Վերջապես, ինչպես աղյուսակն է հուշում, անկախ տարածաշրջանում բնակչության թվաքանակից և բռնադատվածների թվից, դիտարկվող երեք շրջաններում բռնաճնշված կանանց հաշվեկշիռը գրեթե նույնական է:

Գուլագում սեռային հարաբերակցության փոփոխության պատկերը հաստատվում է ներքին գործերի ժողովոմ Բերիային «Պատերազմի տարիներին (1941-1944թթ.) գուլագի աշխատանքների մասին» գուլագի պետ Վ.Գ. Նասեդկինի ներկայացրած հաշվետվությամբ: Դրա համաձայն, կանանց թիվն աճել է և՛ վարչական-տնտեսական պաշտոններում՝ հասնելով 31%-ի (պայմանավորված նրանով, որ հիմնական կադրերից մոտ 200 հազար մարդ զորակոչվել է Կարմիր բանակ), և՛ բանտարկյալների շրջանում. այն դեպքում, երբ 1941 թ. բանտարկված տղամարդկանց թիվը կազմում էր 93%, ապա դրանից հետո նրանց թիվը նվազել էր մինչև 74%, իսկ կին բանտարկյալներինն աճել մինչև 26%: Որպես բանտարկյալների թվային հարաբերակցության փոփոխության պատճառ Նասեդկինը նշում է բանտարկյալների ժամկետից շուտ ազատման հանգամանք<sup>38</sup>: Այնուհանդերձ, գուլագում տղամարդկանց հաշվեկշռի նվազման այլ պատճառներ ևս կային. տղամարդ բանտարկյալների մի մասը, որոնց հանցանքը ծանր չէր համարվում, ևս զորակոչվել էր բանակ, ինչպես նաև գուլագում պատերազմի տարիներին մահացության ցուցանիշները բավական բարձր էին նախորդ տարիների համեմատ<sup>39</sup>: Նասեդկինի ներկայացրած տվյալները և գուլագներում իրավիճակն ավելի լավ պատկերացնելու համար մեջբերեմ Լ. Դենիսովային. «Կանայք երկրորդ աշխարհամարտի տարիներին մեծապես տուժել են, քանի որ Գուլագում կանանց հաշվեկշիռը 7%-ից՝ 1941թ. դրությամբ, աճեց մինչև 26% 1944 թթ.<sup>40</sup>»: Իհարկե, այս թիվն այնքան էլ չի արտացոլում կանանց և տղամարդկանց կրած զրկանքների իրական պատկերը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ կանանց ավելի

36 Համեմատության համար ընտրվել է Տամբովի շրջանի մասին Դյաչկովի հետազոտությունը, քանի որ այն պատերազմի տարիների մասին զենդերային հարաբերակցությունը նկարագրող միակ հասանելի հետազոտությունն է:

37 Дьячков В., *Узлы*, с. 265-267.

38 Фонд Александра Яковлева, Доклад начальника ГУЛАГа В.Г.Наседкина наркомун внутренних дел Л.П.Берия “О работе ГУЛАГа за годы войны (1941-1944)”, [www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1009222](http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1009222).

39 Mikhail Nakonechnyi, “Dead Souls’: Mortality, Disability, and Early Release on Medical Grounds from GULAG, 1930-1955,” *Webinar Series: Political Police and the Soviet System*, 16.04.2020.


40 Lyubov Denisova, *Rural Women in the Soviet Union and Post-Soviet Russia*, *Routledge Contemporary Russia and Eastern Europe Series* (Taylor & Francis, 2010), 124.

շատ ուղարկում էին գաղութներ, որտեղ ռեժիմը համեմատաբար մեղմ էր<sup>41</sup>:

Ընդհանուր վիճակագրությունը ցույց է տալիս, որ, տղամարդկանց Կարմիր բանակ զորակոչելու հանգամանքով պայմանավորված, բռնադատված կանայք թեև թվով չէին գերազանցում տղամարդկանց, բայց նրանց հաշվեկշիռն ընդհանուր թվի մեջ անել էր նախորդ տարիների համեմատ: Ինչպես տեսնում ենք, կանանց գաղութային աշխատանքի պահանջարկը մեծացել էր տղամարդկանց պակասի պատճառով: Ստրկական աշխատանքը, որը օգտագործվում էր ԽՍՀՄ-ի արդիականացման համար, պահանջում էր առնվազն նախկին աշխատուժից ոչ պակաս ծավալ: Ուստի զորակոչված տղամարդիկ, որոնք առաջնային դերակատարություն ունեին ճակատում, տնտեսական ոլորտում, այդ թվում նաև գաղութային տնտեսությունում, պիտի փոխարինվեին կանանցով:

Հայկական նյութի համաձայն՝ պատերազմի տարիներին կանանց նկատմամբ հիմնականում առաջադրվել են հետևյալ **մեղադրանքները**՝ «հայրենիքի դավաճանի ընտանիքի անդամ» կամ ռուսերենից կրճատ՝ «չսիր» (604 հոգի), «դասալիքներին/ավագակներին թաքցնող կամ չմատնող» (25 հոգի), «հակախորհրդային կամ պրոֆաշիստական քարոզչություն տանող», «կեղծ լուրեր տարածող կամ շրջանառող» (երկուսը միասին՝ 95 հոգի), «լրտես» (12 հոգի), «անօրինական երիտասարդական կազմակերպության անդամ» (24 հոգի), «խարդախություն և դասալիքների համար կեղծ փաստաթղթեր կազմող» (19 հոգի), «աշխատանքի կամ բանտարկման վայրից փախուստի դիմող» (8 հոգի): Ընդ որում, կանանց մեղադրանքի տեսակները տղամարդկանց առաջադրվող մեղադրանքների համեմատ տարաբնույթ չէին, ինչը վկայում է այն մասին, որ քաղաքականապես պասիվ լինելու պատճառով կանանց առաջադրվող մեղադրանքի ընտրությունն ավելի սահմանափակ էր:

Խորհրդային Հայաստանում 1941-1945 թթ. բռնադատված կանանց մեղադրանքի տեսակները (գծ. 2)



Աղբյուր՝ Խորհրդային Հայաստանում բռնադատվածների մասին տվյալների շտեմարան (1920-1953 թթ.)

41 Эпльбаум Э., ГУЛАГ. Паутина Большого террора, Московская школа политических исследований, 2006, с. 297.

Տարիքային կազմի ուսումնասիրությունը նույնպես պաշտպանում է ճամբարներում կանանց աշխատուժի պահանջարկի վարկածը: Աղյուսակ 2-ի համաձայն՝ 803 իգական սեռի ներկայացուցիչներից 595-ն աշխատունակ տարիքի կանայք էին, ընդ որում, այս տարիքային խմբում գերակշռում էին 21-40 տարեկանները: Հիմնական տրամաբանությունից շեղվում են միայն որպես *չսիր* աբսորբվողները. այնտեղ մեծ թիվ են կազմել երեխաներն ու ծերերը: Այս դեպքում պետք է հաշվի առնել, որ *չսիրներին* աբսորբել են, իսկ մյուսներին հիմնականում ուղարկվել են ուղղիչ աշխատանքային ճամբարներ կամ բանտարկվել են (աղ. 3):

1941-1945 թթ. բռնադատված կանանց տարիքային կազմն՝ ըստ մեղադրանքի (աղ. 2)

\* Տարիքը հաշվելիս ելման կետ է վերցվել 1945 թ.

Մեղադրանքի տեսակը	1-15 տ.	16-60 տ.	61-93 տ.	Տվյալները բացակայում են
չսիր	154	398	49	3
դասալիքներին թաքցնող/չմատնող	–	20	–	–
ավազակներին թաքցնող/չմատնող	–	5	–	–
հակասովետական քարոզչություն տանող	–	94	1	–
անօրին. երիտ. կազմակերպության անդամ	–	24	–	–
լրտես	–	11	1	–
փախուստ աշխատավայրից կամ ազատագրկ. վայրից	–	8	–	–
խարդախություն, կեղծ փաստաթղթեր պատրաստող	–	19	–	–
հակասովետական տարր	–	4	–	–
Ստալինի հասցեին վիրավորանք հնչեցնող	–	6	–	–
այլ	–	6	–	–
<b>ընդամենը</b>	<b>154</b>	<b>595</b>	<b>51</b>	<b>3</b>

Աղբյուր՝ Խորհրդային Հայաստանում բռնադատվածների մասին տվյալների շտեմարան (1920-1953 թթ.)

Աղյուսակ 3-ում ցույց է տրված Հայաստանից բռնադատված կանանց ազգային պատկերն՝ ըստ մեղադրանքի տեսակի և բնակության վայրի: Չնայած հայ կանայք Հայաստանում բացարձակ մեծամասնությունն էին, այնուամենայնիվ բռնաճնշվել է նրանց 0.04%: ՀԽՍՀ-ում բռնադատված ԽՍՀՄ տիտղոսակիր ազգություններից ադրբեջանցի, ռուս և ուկրաինացի կանայք, տոկոսային հարաբերությամբ գերազանցում են հայ կանանց: Սակայն նրանք ներկայացվածությամբ մեծապես զիջում են բռնադատված այլազգի կանանց՝ ի դեմս իտալացի (14%), թուրք (5.5%), գերմանացի (2.30%) և հրեա (1.36%) կանանց: Վերջինս պայմանավորված էր ստեղծված պատերազմական իրավիճակում ԽՍՀՄ թշնամական երկրներին պատկանող ազգերի ներկայացուցիչներին հետապնդելու հանգամանքով: Ըստ ազգային պատկանելության բռնաճնշումների ենթարկելու նույն տրամաբանությունը գործել է Տամբովի շրջանում. այնտեղ պատերազմի տարիներին ռուս բռնադատված կանայք կազմում էին ընդհանուր թվի 11.9%, իսկ ոչ ռուսները՝ 14.3%<sup>42</sup>: Նույնը չի կարելի ասել պատերազմի տարիներին բռնադատված տղամարդկանց մասին. Խորհրդային Հայաստանում բռնադատված հայ տղամարդիկ երկու անգամ գերազանցում էին օտարազգիներին,

42 Дьячков, ს. ჯ. ა. ჯ. 265, ა. 3:

իսկ Մոլոտովի<sup>43</sup> և Տամբովի<sup>44</sup> շրջաններում այլազգիները ռուսներին զիջում էին համապատասխանաբար երկու և տասը անգամ: Սեռերի միջև այս անհամապատասխանության պատճառը հավանաբար այն էր, որ տղամարդիկ, անկախ ազգային պատկանելությունից, քաղաքականապես ակտիվ լինելու պատճառով մշտապես ՆԳԺ-ի ուշադրության կենտրոնում էին, իսկ կանայք քաղաքականապես պասիվ լինելու պատճառով չէին թիրախավորվում, կամ թիրախ էին դառնում թշնամու «հինգերորդ սյունը» համարվելու պարագայում: Ըստ տվյալների հայաստանյան շտեմարանի՝ Խորհրդային Հայաստանում թիրախավորվել են Գերմանիայից հայրենադարձված ռուսները, օկուպացված տարածքներից էվակուացված ուկրաինացիները, «Գերմանիա մեկնել չցանկացող» գերմանացիները, «նախկին Լեհաստանից փախած և սովետական քաղաքացիություն ընդունել չցանկացող» լեհերը և Գերմանիայից ժամանած հրեաները: Հայաստանում նրանք մեղադրվել են հակասովետական քարոզչություն իրականացնելու և լրտեսության մեջ:

Որպես չսիր հիմնականում դատապարտվել են գյուղաբնակ հայերն ու ադրբեջանցիները, իսկ խարդախության ու կեղծ փաստաթղթեր պատրաստելու և հակասովետական կազմակերպությունների մեջ ներգրավված լինելու համար՝ հայ և ռուս կանայք: Այլ մեղադրանքներով դատապարտվածների թվաքանակը քիչ է, բայց կազմված է բացառապես այլազգի կանանցից:

*Մեղադրանքն ըստ ազգային պատկանելության և բնակության վայրի (աղ. 3)*

Տեղադրված՝ էքսել \$այլում

*Աղբյուրներ՝ Խորհրդային Հայաստանում բռնադատվածների մասին տվյալների շտեմարան (1920-1953 թթ.)*

*1939 թ. ԽՍՀՄ մարդահամար: Բնակչության ազգային կազմը՝ ըստ ԽՍՀՄ հանրապետությունների*

Բռնադատված կանանց դատապարտող օրգանին, ժամկետին և վայրին վերաբերող տվյալները համադրելիս հնարավոր է դուրս բերել որոշակի օրինաչափություններ (աղ. 4): Վճիռ կայացնող հիմնական օրգանը ԽՍՀՄ ՆԳԺ Հատուկ խորհրդակցությունն<sup>45</sup> էր, որը 334 կանանց դատապարտել է 1-5 տարվա աքսորի կամ ազատազրկման և 6-10 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային ճամբարներում: Որոշում կայացնող մյուս հիմնական օրգանը Ռազմական տրիբունալն էր, որը տարբեր մեղադրանքներ ունեցող 89 կանանց դատապարտել էր 1-10 տարվա ազատազրկման:

*Բռնադատված կանանց դատապարտող օրգանն ու դատապարտման ժամկետն՝*

43 Нечаев М., Политические репрессии в Пермской (Молотовской) области накануне и в годы Великой Отечественной войны (1939-1945 годы), Вестник Челябинского государственного университета, 2014, № 22 (351), История, вып. 61, с. 87, таб. 4, 5:

44 Дьячков В., *Նույն տեղում*:

45 Особое Совещание при НКВД СССР, ԽՍՀՄ ՆԳԺ-ի ենթակայության տակ գտնվող վարչական մարմին, որը գոյություն է ունեցել 1934-1953 թթ.: Նրան իրավունք էր վերապահված արտադատական կարգով աքսորել հասարակության համար վտանգավոր համարվող անձանց: Երկրորդ աշխարհամարտի տարիներին ՀԽ-ը նաև իրավունք էր ստանձնել համապատասխան պատժամիջոցներ կիրառել հակահեղափոխական հանցագործությունների և ԽՍՀՄ կառավարման կարգի դեմ առանձնապես վտանգավոր հանցագործությունների գործով՝ մինչև 5 տարի ժամկետով: Տե՛ս՝ Лубянка. Органы ВЧК–ОГПУ–НКВД– НКГБ– МГБ–МВД–КГБ. 1917–1991: Справочник / Сост. А. И. Кокурин, Н. В. Петров. М., 2003; և Лысков Д., Запретная правда о «сталинских репрессиях». «Дети Арбата» лгут! М., 2012.

*ըստ մեղադրանքի տեսակի (աղ. 4)*

Տեղադրված՝ էքսել ֆայլում

*Աղբյուր՝ Խորհրդային Հայաստանում բռնադատվածների մասին տվյալների շտեմարան (1920-1953 թթ.)*

Այսպիսով, շտեմարանի տվյալների քանակական վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ, ի տարբերություն Տամբովի շրջանի, որտեղ կանայք հիմնականում թիրախավորվել են Մեծ Տեռորի տարիներին՝ Խորհրդային Հայաստանում պատերազմի տարիներին բռնադատվել է կանանց ողջ թվաքանակի կեսից ավելին: Այնուամենայնիվ, պատերազմական շրջանում կանանց թվաքանակը գուլագում և աշխատանքային մյուս ճամբարներում զգալիորեն աճել է ԽՍՀՄ ողջ մասշտաբով՝ տնտեսական նկատառումներից ելնելով, մանավանդ, որ բռնադատված կանանց մեջ գերակշռում էին աշխատունակ տարիքի կանայք: Բացի այդ, մեղադրանքների մեծ մասում ՆԳԺԿ-ը հատկապես թիրախավորել է այլազգի կանանց: Բացառություն են կազմում չսիր կատեգորիայով բռնադատված հայ և ադրբեջանցի կանայք, որում նրանք բռնադատման զոհ են դարձել առանց ուղղակի «հանցանք» ունենալու:

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ (ՉՍԻՐՆԵՐ)

1942թ. հունիսի 29-ին Ի. Ստալինը ստորագրել էր ՊԳԿ<sup>46</sup> N 1926հգ<sup>47</sup> «Հայրենիքի դավաճանների ընտանիքների անդամների մասին» որոշումը, որի համաձայն «այն անձանց (զինծառայողներ և քաղաքացիական անձինք) ընտանիքի չափահաս անդամները, որոնք պատժի առավելագույն չափի են դատապարտվել դատական մարմինների կամ ՆԳԿ Հատուկ խորհրդակցության կողմից ՌՍՖՍՀ 58–1 ա քրեական օրենսգրքով և խորհրդային այլ հանրապետությունների քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով լրտեսության համար՝ ի նպաստ Գերմանիայի և ԽՍՀՄ-ի հետ պատերազմող այլ երկրների, թշնամու կողմը անցնելու, դավաճանելու կամ նրանց գրաված տարածքներում գերմանացի զավթիչներին օժանդակելու և Հայրենիքը դավաճանելու փորձի և դավաճանական մտադրությունների համար ենթակա են ձերբակալման և աքսորի հիևզ տարի ժամկետով դեպի ԽՍՀՄ հեռավոր շրջաններ»<sup>48</sup>:

Խորհրդային Հայաստանում պատերազմի տարիներին ընդհանուր առմամբ որպես *չսիր* բռնադատվել է մոտավորապես **396** ընտանիք՝ **887** մարդ<sup>49</sup>: Կանայք եղած թվի մեջ կազմում էին մեծամասնությունը՝ **469** հոգի, իսկ չափահաս տղամարդիկ ու երեխաներն՝ առանց սեռով տարանջատման՝ **418**: *Չսիր* կատեգորիան տարածվում էր բռնադատվածի ընտանիքի բոլոր անդամների վրա: Կախված նրանից, թե ովքեր էին մտնում նույն տնտեսության մեջ, դա կարող էին լինել «հայրենիքի դավաճանի» ծնողները, սովորաբար մայրը, կինը և երեխաները: Ի տարբերություն 1937 թ. *չսիրների* նկատմամբ իրականացված բռնությունների, երբ մինչև 3 տարեկան երեխաներն ուղարկվում էին մանկատներ իրենց բնակության վայրում, իսկ 5 տարեկանները՝ հատուկ մանկատներ խոշոր քաղաքներից հեռու<sup>50</sup>: 1942 թ. «ԽՍՀՄ հեռավոր հյուսիսային շրջաններ ընտանիքի անդամներին աքսորելու կարգի մասին» ԽՍՀՄ ՆԳԿ-ի՝ *չսիրների* մասին որոշման դրույթների մեջ կատարված լրացումների համաձայն ընտանիքի անչափահաս անդամները նույնպես ենթակա էին աքսորի<sup>51</sup>: «Գեղամա աշխարհ» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Խ.Խլղաթյանի՝ բանավոր պատմության հիման վրա գրված կյուբում

46 Պաշտպանության գլխավոր կոմիտե (ռուս.՝ ГКО):

47 Հոկտեմբերի 29-ի ՊԳԿ:

48 О членах семей изменников родины/ Коммерсантъ Власть, 2007, N. 24, с. 52.

49 Չսիրների պարագայում թիվը մոտավոր է, բանի որ դատավիճակն ու մեղադրանքը շտեմարանում չի տարածվել անչափահասների վրա, հետևաբար նրանց թվաքանակը ստանալն ըստ մեղադրանքի ֆիլտրելիս որոշակի դժվարություն է ներկայացնում :

50 Марголис А., Государственные дети в Москве, вводная статья сайта “Это прямо здесь”, <https://topos.memo.ru/category/155>, 22.08.2020.

51 Член семьи изменника родины, ЧСИР, Музей истории ГУЛАГа, [www.gmig.bm.digital/ontology/310921857614241792/chlen-semi-izmennika-rodinyi-chsir](http://www.gmig.bm.digital/ontology/310921857614241792/chlen-semi-izmennika-rodinyi-chsir).



որպես *չսիր* աքսորված կնոջ վկայությամբ իր երեխաներին արդեն աքսորավայրում են մանկատուն հանձնել<sup>52</sup>:

*Չսիրների* ձերբակալությունները սկսվել են որոշման կայացման հենց նույն տարվանից՝ 1942 թ. և շարունակվել մինչև պատերազմի ավարտը՝ 1945 թ.: *Չսիրների* գործերը հիմնականում միանման կազմ ու բովանդակություն ունեն: Գործի սկզբում կցված է ընտանիքի՝ գլխավորի գնդակահարության մասին դատավճիռը, որպես նրա ընտանիքի անդամների համար գործ կազմելու հիմք: Գործում առկա են մի քանի հարցաքննություն, որոնցից մեկն աքսորվողի, մյուսները համագյուղացիների կամ համաքաղաքացիների հարցաքննություններն են: Այդ հարցաքննությունները ևս ստանդարտ բովանդակություն ունեն այն մասին, թե որտեղ է ծառայում ընտանիքի գլխավորը, թե կան արդյոք ընտանիքից բանակում ծառայողներ և բռնադատվածներ: Մյուս կողմից, չնայած գաղտնի որոշման համաձայն ձերբակալելու հրամանին, Յայաստանում ձերբակալվել է ընդամենը 35 անձ: Ձերբակալված 603-ից (կանայք և աղջիկները միասին հաշված) 217-ը ստորագրությամբ բաց են թողնվել մինչև աքսորը, իսկ 386-ի ձերբակալության մասին տվյալները բացակայում են<sup>53</sup>: Խ. Խլղաթյանի հաղորդմամբ նույնպես աքսորված կնոջը չեն ձերբակալել և նույնիսկ չեն հարցաքննել, այլ ուղղակի զգուշացրել են առաջիկա աքսորման մասին<sup>54</sup>: Ձերբակալված չլինելու հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ գործին կցված հարցաքննություններն իրականում չեն եղել: Հավանաբար դրանք օգտագործվել են ընտանիքի մասին հավաքագրած տվյալները գործում արձանագրելու համար: Մանավանդ, ՆԳԺԿ հիմնարկների նամակագրությունից պարզ է դառնում, որ *չսիրների* գործերը հրահանգված է եղել կազմել հինգ օրվա ընթացքում<sup>55</sup>: *Չսիրների* մեղադրանքը կայացրել է ԽՍՀՄ ՆԳԺԿ Հատուկ Խորհրդակցությունն՝ առանց դատի: Հարկ է նշել, որ Հատուկ Խորհրդակցությունը, որպես լիազոր մարմին, կայացրել էր նաև մի շարք դեպորտացիաների որոշումներ: ՆԳԺԿ-ը լիազորությունը փոխանցում էր Հատուկ խորհրդակցությանն այն դեպքերում, երբ, բռնությունները մասսայական էին, որոշումն՝ ադմինիստրատիվ և մեղադրվողների համար առանձին դատ անցկացնելու ժամանակ և կարիք չկար<sup>56</sup>:

Արխիվային նյութերն ու անձնական պատմությունները թույլ են տալիս ենթադրել, որ բռնադատվածների այս կատեգորիայի համար առավել տրավմատիկը եղել է աքսորի ճանապարհը: Անչափահաս երեխաներն այս առումով առավել ռիսկային գոտում էին, քանի որ սովի ու կլիմայական անբարենպաստ պայմանների պատճառով ճանապարհին չափազանց բարձր էր նրանց մահացության ցուցանիշը: Արխիվային նյութերը և բանավոր պատմությունները վկայում են, որ հսկող ոստիկանները մահացած երեխաներին զցել են գնացքի

52 Խլղաթյան Խ., Մայրություն գերության մեջ, [www.epfarmeria.am/sites/default/files/Document/Khosrov\\_Khghatyan\\_Motherhood\\_in\\_Captivity\\_June\\_14.pdf](http://www.epfarmeria.am/sites/default/files/Document/Khosrov_Khghatyan_Motherhood_in_Captivity_June_14.pdf), 24.06.2020.

53 Վերջիններս հիմնականում ընտանիքի այլ անդամներն են, ներառյալ անչափահասները, որոնց դիմաց շտեմարանը կազմող խումբը տվյալներ չի լրացրել՝ հաշվի առնելով, որ նրանց նկատմամբ դատավճիռ չի կայացվել: Նրանք համարվել են ուղղակի այն կնոջ խնամակալության տակ գտնվողներ, որի անունով կազմվել է գործը:

54 ԴԱՆ, հեռախոսագրույց Խ.Խլղաթյանի հետ, Երևան, 2020 թ.:

55 ՀԱԱ, Ֆ. 1191, Ց. 17, Գ. 121:

56 Лубянка. Органы ВЧК–ОГПУ–НКВД– НКГБ–МГБ–МВД–КГБ. 1917–1991: Справочник / Сост. А. Кокурин, Н. Петров. М., 2003; և Лысков Д., Запретная правда о «сталинских репрессиях». «Дети Арбата» лгут! М., 2012.

պատուհանից կամ նավից դուրս<sup>57</sup>: Չնայած փաստաթղթերի արձանագրության համաձայն աքսորվողներն իրավունք ունեին վերցնել անսահմանափակ քանակությամբ սնունդ և մինչև 500 կգ իրեր<sup>58</sup>, սոցիալապես անապահով լինելու կամ աքսորի անսպասելիության պատճառով<sup>59</sup> շատերը հաճախ իրենց հետ գրեթե ոչինչ չեն վերցրել: Որոշ դեպքերում, աշխատող տղամարդու բացակայության և ապրուստը հոգալու իրեր չունենալու պայմաններում, աքսորավայրում նույնպես աքսորված կանայք դատապարտված են եղել մահվան<sup>60</sup>:

Ըստ Է. Մեյսոնի՝ հայրենիքի դավաճանների կանանց համար նախատեսված հատուկ ճամբարներն առաջին անգամ ստեղծվել են 1937-1938 թթ. և զանգվածային երևույթ են դարձել արդեն 1940թ.<sup>61</sup>: Խորհրդային Հայաստանից պատերազմի տարիներին *չսիրներն* աքսորվել են չորս հիմնական ուղղություններով՝ Ղազախական ԽՍՀ-ի հյուսիսային և հարավային շրջաններ, Նովոսիբիրսկ և ՌՍՖՍՀ հյուսիսային շրջաններ՝ առանց վայրի կոնկրետացման: Հայտնի է, որ ԽՍՀՄ գույազ համակարգի կազմում կար «կանանց» չորս ճամբար<sup>62</sup>: Նրանցից ամենամեծը Ղազախստանի հյուսիսում տեղակայված Կառլազի<sup>63</sup> կազմում գտնվող Ակմոլինսկի ճամբարն էր, որը հետագայում հայտնի դարձավ «ԱԼԺԻՐ» անունով<sup>64</sup>: Չնայած, *չսիրների* գործերում ճամբարը նշված չէ, և «ԱԼԺԻՐ» թանգարանի ցուցակներում նույնպես չեն երևում պատերազմի տարիներին աքսորված հայ կանայք, ամենայն հավանականությամբ Ղազախստանի հյուսիսային շրջաններ աքսորվող կանայք իրենց «հանցանքի» համար պատիժն ԱԼԺԻՐ-ում են կրել՝ իրենց ընտանիքների հետ:

\*\*\*

Ի տարբերություն *չսիր* կատեգորիայի նկատմամբ կիրառված պատժի, որոնք պլանավորվել են նախապես, իրականացվել են դատապարտվածի առանց ուղղակի հանցանքի առկայության և առանց դատի, մյուս մեղադրանքների համար կանայք պատասխանատվության են ենթարկվել իրենց «կատարած հանցանքի» համար: Մյուս մեղադրանքների առնչությամբ հարուցված գործերը (բացառությամբ դասալիքներին չմատնող և կեղծ փաստաթղթեր պատրաստելու համար ձերբակալված կանանց, որտեղ մեղադրանքները քիչ թե շատ փաստական հիմք ունեին) մնացածից առանձնանում են մեղադրանքը կառուցելու առավել մեծ կամայականությամբ: Այս գործերում **քննիչների մանիպուլյացիաները, կանանց անցյալից կառչելու փորձերն ու մատնություններն** ավելի ցայտուն են երևում:

57 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 12, Գ. 683, 685:

58 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 17, Գ.126:

59 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 12, Գ. 683, 685:

60 *Նույն տեղում*: Գործում ներկայացված են աքսորավայրում կանանց ապրուստի ծանր պայմանները, որի արդյունքում նրանցից երկուսն էլ մահացել են, իսկ երեխաները սփռվել են տարբեր շրջաններ նրանց մահից հետո:

61 Emma Mason (2001), նշվ. աշխ., էջ 134.

62 Сураганова З.К., АЛЖИР как феномен «женской» несвободы в репрессированной памяти казахского народа// Северо-Восточный гуманитарный вестник, 2018, N. 1(22), сс. 64-72, с. 65.

63 Ռուս. կրճատ՝ Կարազանդայի ուղղիչ աշխատանքային ճամբար:

64 Ռուսերենից կրճատ՝АЛЖИР (Акмолинский лагерь жен изменников Родины):

# ՀԱԿԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՄ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂՆԵՐ ՈՒ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐ ՏԱՐԱԾՈՂՆԵՐ

Ներքին ու արտաքին քաղաքական գործընթացները, պատերազմի տարիներին նաև ռազմական գործողությունները հաճախ էին դառնում քաղաքացիների առօրյա խոսակցության առարկա: Աշխատավայրերում կազմակերպվում էին թերթերի ընթերցումներ և ռադիոյից ստացված լուրերի քննարկումներ, ազենտների միջոցով հաճախ ՆԳԺ-ն ինքն էր հրահրում քաղաքական խոսակցություններ: Դրանով իշխանությունը քաղաքացիներին տեղորի մասնակից էր դարձնում դրդելով նրանց մասնակցել «Ժողովրդի թշնամիներին» հայտնաբերելու գործին<sup>65</sup>: 1941-1945 թթ. ընթացքում, երբ պաշտոնական տեղեկատվական ցանցերը փլուզվել էին, բանավոր Նորությունները Նույնիսկ ավելի մեծ կարևորություն էին ստացել՝ դառնալով տեղեկատվական բացը լրացնելու միջոց: Պատերազմական դրությունն ուժգնացրել էր դեռևս 1939 թ. սկիզբ առած պաշտոնական լրատվամիջոցների նկատմամբ վստահության ճգնաժամը<sup>66</sup>: Այս պայմաններում այլընտրանքային լուրերը, որոնց տարածումն իշխանությունը փորձում էր խստորեն վերահսկել, ավելի մեծ տարածում էին գտել: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1941 թվի հուլիսի 6-ի հրամանով «Պատերազմի ժամանակ բնակչության մոտ տազնապ առաջացնող կեղծ լուրեր տարածելու համար պատասխանատվության ենթարկելու մասին» Չինվորական տրիբունալով կասկածյալները բռնադատվում էին 2-5 տարի (եթե հանցանքի բնույթը չէր սահմանում առավել խիստ պատիժ)<sup>67</sup>:

Կնոջը «հակասովետական քարոզչության» մեջ մեղադրելու համար ամենատարածված ձևը ընտանեկան-բարեկամական կապերն ուսումնասիրելն էր: Այդպես, պատերազմի տարիներին քաղաքական մեղադրանք ստանալու հարվածի տակ են հայտնվել այն կանայք, որոնց ամուսիններն ու հայրերը մինչխորհրդային ժամանակներում ունեցել են «կուլակային» տնտեսություն, նախկինում բռնադատվել են, և Նույնիսկ այն կանայք, ովքեր նախկինում բռնադատված են եղել: Օրինակ, հակախորհրդային հավաքույթներ կազմակերպելու և «Ժողովուրդների հոր» հասցեին սուր արտահայտություններ թույլ տալու մեջ մեղադրվող հինգ կանանց գործում հարցաքննությունների արձանագրություններում և մեղադրական եզրակացությունում հատուկ շեշտված են նրանց ծագումն ու բռնադատված

65 Michael Polano, *The Great Terror: Violence, Ideology, and the Building of Stalin's Soviet Empire* (Wayne State University Theses, 2017): 73-76.

66 Timothy Jonston, նշվ. աշխ., p. 78.

67 Исторические Мемориалы, Об ответственности за распространение в военное время ложных слухов..., [www.istmat.info/node/24359](http://www.istmat.info/node/24359).

ամուսիններ ունենալու հանգամանք<sup>68</sup>: Բացի այդ, երբեմնի «կուլակ» համարվող կանանցից մեկի տան խուզարկության ժամանակ բռնագրաված ոսկեդեղն, թանկարժեք քարերը, կահույքը և այլ պարագաներն այն բանի վկայությունն են, որ նման ընտանիքների պարագայում ձերբակալությունը հաճախ կարող էր առիթ հանդիսանալ նրանց ունեցվածքին տիրանալու համար: Այդ գործերը կառուցվել են այն սկզբունքով, որ երբեմնի սեփականությունից, հայրերից/ամուսիններից զրկվելը, կամ իրենց բռնադատվելը կանանց մոտ թշնամանք է հարուցել սովետական իշխանության նկատմամբ: «Թշնամանքի» պատճառով ձերբակալված կանայք «վկայակոչում են» նաև իրենց կամ իրենց ամուսինների ձերբակալությունները և որպես «ժողովրդի թշնամի» ունեցվածքից զրկվելը: Հարցաքննության ժամանակ կանանցից մեկը նշում է, որ իր ամուսնու ձերբակալությունից հետո կորցրել է բնակարանը և երկար ժամանակ թափառել է երեխաների հետ: Ի վերջո, 1940թ. մի սեկյակ է ստացել բարաքներում<sup>69</sup>: Այսինքն, սովետական իշխանությունների՝ բռնադատվածների հարազատներին, մասնավորապես կանանց վերագրած դժգոհությունից ձերբազատվելն ուներ միայն մեկ լուծում. այդ կանանց հնարավոր վսասակար գործողությունները կարելի էր կասեցնել նրանց մեկուսացնելով:

Քարոզչության և կեղծ լուրերի տարածման համար դատապարտված անձանց քննության վարույթը չափազանց անհետևողական է եղել: Քննիչները հարցաքննությունները միանգամից մի քանի ուղղությամբ են վարել. դրանցում վկաների և մեղադրվողի կողմից բացահայտվում են ձերբակալվածի տարբեր «հանցանքները», որոնք պետք է հիմք ծառայեին մեղադրանք առաջադրելու համար: Այդ տրամաբանությամբ է ՆԳՄ-ը վարել Կրասնոդարի երկրամասի Կրոպոտկին քաղաքում ապրող Սերպուն (Սրբուհի անվան ռուսականացված տարբերակը) անունով մի կնոջ գործը, ով 1944 թ. «զինծառայողների մոտ հակասովետական քարոզչություն անելու և հայրենիքը դավաճանել հրահրելու» համար դատապարտվել է Կրասնոյարսկի երկրամաս երեք տարվա աքսորի: Թուրքիայում ծնված լինելու հանգամանքը և Կարմիր բանակում ծառայող ընտանիքի անդամներին տեսակցության նպատակով Գերմանիայի օկուպացրած տարածք մեկնելն առիթ էր ծառայել նրա անձը թիրախավորելու: Քննիչը հարցաքննությունների միջոցով բացահայտում է, որ նրա ամուսինը գերի է ընկել գերմանացիների մոտ, և նա մի քանի անգամ այցելել է ամուսնուն, իր տուն այցելող զինծառայողների համար օղի է ձեռք բերել և կապ է ունեցել Դրոյի հետ<sup>70</sup>: Նա նաև փորձում է ճշտել Սերպունի կենսագրությունը Թուրքիայում ապրելու ժամանակ և թե արդյոք վերջինս արտասահմանում բարեկամներ ունի, ինչու է այցելել Կարմիր բանակում ծառայող դստերը և այլն: Ռոստովյան շրջանի ՆԳՄ-ի՝ ԽՍՀՄ ՆԳՄ-ին ուղղված նամակի միջոցով բացահայտվում է, որ ոստիկանական բաժանմունքի աշխատակիցները մեղադրյալի հետ սերտ կապի մեջ են եղել, որոնց միջոցով վերջինս գնացքի անցաթուղթ է ձեռք բերել օկուպացված տարածք դատերը տեսակցության մեկնելու համար: Հավանաբար, իրականում դա է կնոջը բռնադատելու պատճառ հանդիսացել: Երբեմն քննիչը հարցաքննության ժամանակ նույնիսկ քարոզչության վերաբերյալ գրեթե հարցեր չի տվել, բայց հետաքննության արդյունքում հենց այդպիսի մեղադրանք է առաջադրվել: Օրինակ, այդպիսին է ոմն Ելենա Մասլակովայի անունով կազմված գործը, ով ծնվել էր Բրեստ-Լիտովսկում:

68 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 4, Գ. 415:

69 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 4, Գ. 648:

70 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 16, Գ. 91:

Գերմանիայի կողմից քաղաքի գրավումից հետո նա իր ծնողների հետ միասին տեղափոխվել էր Ռուսաստան, իսկ հետագայում՝ ամուսնու ծառայության վայր՝ Լենինական: Այն դեպքում, երբ նա մեղադրվել է զինվորների կանանց շրջանում հակասովետական քարոզչություն տանելու մեջ, քննիչը հարցաքննություններում թիրախավորել է Ելենայի ծնողների՝ Լեհաստանում ունեցած «կուլակային» տնտեսության հանգամանքը, լեհ սպաների հետ նրա կապերը և Լեհաստանում ապրելու մասին նրա զգացմունքները<sup>71</sup>:

Որոշ դեպքերում նախնական մեղադրանքը չկարողանալ ապացուցելու պարագայում հետաքննության ընթացքում ձերբակալված կանանց նկատմամբ մեղադրանքը փոխվել է. ի վերջո նրանք դատապարտվել են հակախորհրդային քարոզչություն իրակացնելու համար, քանի որ նման մեղադրանքը կարելի էր կառուցել վկաների կողմից առօրյա խոսակցությունները մեջբերելու հիման վրա: Այդպես, Կիևից Էվակուացված և Երևանում լրտեսության մեղադրանքով ձերբակալված ոմն Կուզնեցովա Չինսիդային, ով ներկայացել էր որպես Կոչերգինա Ալեքսանդրա, ամեն հարցաքննության ժամանակ կենսագրական իրարամերժ տվյալներ հաղորդելով, հաջողվել էր շփոթեցնել քննիչին: Ի վերջո, նրա ինքնությունը քննության ընթացքում պարզել չկարողանալու պատճառով սկզբում առաջադրված մեղադրանքը քննության ընթացքում փոխվել է «Ֆաշիստական քարոզչության»<sup>72</sup>: Մեկ այլ կնոջ՝ Լենինականում ծնված Հարությունյան-Կոլինիչենկո Սեդային, ով աշխատել է հացի գործարանում որպես հաշվապահ, սկզբում մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Ստալինի մասին հակահեղափոխական, ինչպես նաև ռուսների և հրեաների մասին շովինիստական արտահայտություններ է թույլ տվել: Չնայած առաջադրված մեղադրանքին, հարցաքննություններում քննիչն առավել մանրամասնորեն փորձում էր ճշտել, թե որտեղից է նրանց տանը հայտնվել պատերազմի տարիների համար բացառիկ հանդիպող խոզի ճարպը, կարագը և այլ մթերքները: Այնուամենայիվ, անկախ հարցաքննություններում արձարծվող թեմաներից և նախնական մեղադրանքից հետագայում Սեդայի մեղադրանքը փոխվել է «լուրերի և խուճապի տարածման», և նա դատապարտվել է 2 տարվա ազատազրկման բանտում<sup>73</sup>:

Պատահական չէ, որ մարդկանց դատապարտման գործում վկաների ցուցմունքները՝ գործակալների կամ քաղաքացիների մատնությունների միջոցով, հաճախ վճռորոշ դեր են ունեցել: Գործակալներին ՆԳՄԿ-ը հմտորեն թաքցնում էր: Դատի ժամանակ նրանք հաճախ չէին ներկայանում<sup>74</sup>, իսկ կազմված գործում նրանց տրամադրած տեղեկությունները կամ հարցաքննությունները տեղադրվում էին առանձին թղթապանակում: Մատնելուն դրողը հանգամանքները տարբեր էին. Ուսումնասիրված արխիվային նյութերի համաձայն մատնության առիթ են դարձել կասկածամտությունը, իշխանության ստեղծած «ժողովուրդների թշնամիների» նկատմամբ որոշ քաղաքացիների ունեցած նախապաշարմունքները, նախանձը, դիմացինի ունեցվածքին տիրանալու ձգտումը<sup>75</sup>, վրեժի ցանկությունը<sup>76</sup>, նաև այն, երբ կինը հրաժարվում էր բանակի համար օգնություն կամ հանգանակություն

71 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 16, Գ. 1682:

72 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 2, Գ. 887, 888:

73 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 10, Գ. 1258, 1259:

74 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 3, Գ. 1573, 1574:

75 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 4, Գ. 648:

76 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 2, Գ. 1061, 1062:

տրամադրել<sup>77</sup>: Օրինակ, Նինա Պոնամարյովայի գործն այն եզակի գործերից է, որտեղ հստակ երևում են բռնաճնշումների մեխանիզմները, հասարակության ընկալումների, միջանձնային հարաբերությունների ազդեցությունը բռնադատվելու վրա<sup>78</sup>: Նա ծնունդով Ախալքալաքից էր, ապրում էր Երևանում: Նրա ամուսնուն, ով Արմենտորգի<sup>79</sup> տնօրենն էր, Մեծ տեռորի տարիներին ձերբակալվելուց անմիջապես հետո՝ 1937 թ. ձերբակալել են նաև իրեն՝ Նինային: Ազատվելուց հետո հարևաններն այդ հանգամանքն նրա դեմ են օգտագործել՝ տարբեր իրավիճակներում նրան խտրական վերաբերմունքի արժանացնելով: Նինայի նամակներից և հարցաքննությունների արձանագրություններից, որտեղ նա շարունակ պնդել է իրեն զրպարտող հարևանների մասին, տեղեկանում ենք, որ կերոսին ստանալու ժամանակ հարևանուհիները նրա սպասքը հերթից դուրս են շարտել, նշելով, որ թշնամու ընտանիքին ոչինչ չի հասնում: Դրան գումարվել են կենցաղային տարբեր իրավիճակներ. օրինակ, երբ Նինան հարևանուհուն մերժել է իր ունեցած կտորը վաճառելու մեջ (պատճառաբանելով, որ կտորը նախատեսել է իր երեխաների համար, որոնք հազուստ չունեն հագնելու), միջանցքում աղբի տեղադրության հետ կապված վեճեր են ծավալվել, և երբ գիշերը Նինայի հյուրերը հարևանուհիներից մեկի լուսամուտն են պատահմամբ թակել, այդ ամենը հետագայում հարևանուհիների մոտ վրեժ լուծելու ցանկություն է առաջացրել, ինչը և նրանց մատնության է դրդել: Նինային աքսորելուց հետո հարևանների հալածանքները շարունակվել են նրա երեխաների նկատմամբ՝ փորձելով վերջիններիս դուրս հանել սենյակից, և իր նկատմամբ՝ նաև աքսորից վերադառնալուց հետո: Չնայած այն բանին, որ հարցաքննությունների արձանագրությունները հիմնականում բացահայտել են միջանձնային այս հարաբերությունները, Նինան մեղադրվել է «Ֆաշիստական Գերմանիայի հարձակման հաջորդ. օրն իր տանը խնջույք կազմակերպելու մեջ՝ ի նշան Սովետական իշխանության տապալմանը» և 1942 թ. աքսորվել հինգ տարով:

Հայաստանում հակասովետական քարոզչության, կեղծ լուրեր տարածելու, սադրիչ արտահայտություններ թույլ տալու համար և որպես հակախորհրդային տարր պատերազմի տարիներին դատապարտվել է 95 կին՝ ստանալով 2-10 տարվա ազատազրկում: Այդուհանդերձ, գործերի առանձնահատկությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ մեղադրանքներով ձերբակալված անձանց թիվը ոչ թե արտահայտում էր այդ երևույթի տարածվածության ծավալները, այլ հաճախ առիթ էր դառնում ձերբակալություններ սանձազերծելու համար: Առօրյա զրույցներում կանանց չկանխամտածված արտահայտությունները հաճախ կատալիզատոր էին դառնում մատնության համար, կամ մեկնաբանվում որպես լուրեր տարածելու փորձ, իսկ առավել հաճախ քարոզչության մեջ մեղադրվում էին դրա հետ չառնչված անձինք: Այդ թեզն ամրապնդվում է նաև քարոզչության մեղադրանքի ընդհանուր վիճակագրության համամասնությամբ. քարոզչության համար մեղադրված կանանց թիվը 1920-1953թթ. 126 հոգի է կազմում: Նախապատերազմյան տարիներին քարոզչության, լուրեր տարածելու համար ընդամենը 21 կին է բռնադատվել: Այս վիճակագրությունը կրկին թույլ է տալիս ենթադրել, որ պատերազմական ժամանակ քարոզչության համար մեղադրելու քողի տակ ավելի շատ կանանց են ձերբակալել: Թեև չի կարելի բացառել այն հանգամանքը, որ պատերազմական

77 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 2, Գ. 1459, Ց. 13, Գ. 1868:

78 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 4, Գ. 648:

79 Առևտրային ձեռնարկությունների միավորում Խորհրդային Հայաստանում:

անորոշ վիճակը նաև օբյեկտիվորեն պարարտ հող էր ստեղծել տարբեր ասեկոսների, ենթադրությունների, կեղծ կամ չճշտված լուրեր տարածելու համար՝ ելնելով ստույգ տեղեկատվության պակասից, պատերազմական իրավիճակն իր հերթին ուղղակի նպաստել էր ավելի շատ կանանց ձերբակալմանը, քանի որ վկաների միջոցով մեղադրանքը կառուցելը հեշտ էր:

Գործերից մեկում կարմիր թելով շրջանառվում է այն գաղափարը, որ կանայք որոշել էին նախկինում ունեցած իրենց այգիների կալվածքների ու իրենց ամուսինների ձերբակալության մասին փաստաթղթերը գերմանացիների գալուսն պես փակցնել պատուհաններին, որ վերջիններս տեսնելով, որ իրենք «ճնշված ժողովուրդ» են, փրկեն իրենց<sup>80</sup>: Չնայած արխիվային գործերը չեն կարող հիմք ծառայել բնակչության որոշակի տոկոսի մոտ հակառակորդի նկատմամբ «համակրանք» ունենալու փաստն արձանագրելու համար, այնուամենայնիվ, եթե հիմք ընդունենք, որ մի կողմից ՆԳԺԿ-ը պարբերաբար քաղաքացիների տրամադրությունների մասին տեղեկություններ էր հավաքում, հետագայում դրանք կարող էին հիմք հանդիսանալ բնակչության շրջանում առկա հիմնական քննարկումները մեղադրանք դարձնելու համար, մյուս կողմից, այլ աղբյուրների վկայությունները հակառակորդի ոչ միանշանակ ընկալման մասին կարող են փաստել որոշակի «համակրանքի» խոսույթի գոյությունը, որի մասին տարբեր վկայություններ կան Հայաստանում հավաքագրված բանավոր պատմություններում, Հարվարդյան ծրագրում և մի շարք հետազոտություններում<sup>81</sup>:

80 ՀԱԱ, Ֆ. 1191, Ց. 4, Գ. 415:

81 Մանրամասն տե՛ս՝ Պապիկյան Ա., Երկրորդ համաշխարհային պատերազմը հերոսական պատումից դուրս, 2020, [www.epfarmeria.am/sites/default/files/Document/Aida\\_Papikyan\\_June\\_14.pdf](http://www.epfarmeria.am/sites/default/files/Document/Aida_Papikyan_June_14.pdf), էջ 6:



## «ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ»

Բացի քարոզչության համար ձերբակալվածներից՝ գրեթե բոլոր տիպի մեղադրանքների դեպքում գործերը խմբակային են, այսինքն սովորաբար կանայք ձերբակալվել են գործով անցնող այլ տղամարդկանց հետ: Այդպես է նաև «ֆաշիստական կազմակերպության անդամ հանդիսացող» կանանց պարագայում: Նրանք գործով անցնում են ոչ թե որպես հիմնական գործող, այլ ժողովներին մասնակցող կամ կազմակերպության գործունեությանն օգնություն ցուցաբերող անձինք: Ձերբակալվածները երիտասարդ էին, երբեմն՝ անչափահաս: Կազմակերպության անդամ հանդիսացող անձանց նկատմամբ գործերը կազմվել են ձևագրի սկզբունքով: «Հակախորհրդային կազմակերպության անդամ» հանդիսանալու մեղադրանքով ձերբակալված անձանց ցուցմունքով այլ գործեր են բացել՝ այլ երիտասարդների նկատմամբ առաջադրելով նույն մեղադրանքը: Գործով մեղադրվող երիտասարդ աղջիկները իրենց նկատմամբ առաջադրված մեղադրանքի հետ կապված են եղել այնքանով, որ սովորաբար ձերբակալված երիտասարդների համադասարանցիներն են եղել, իսկ որոշ դեպքերում նրանց սիրեցյալները:

# ԴԱՍԱԼԻՔՆԵՐԻՆ/ԱՎԱԶԱԿՆԵՐԻՆ ՉՄԱՏՆՈՂ ԿԱՆԱՅՔ

Դասալիքներին չմատնելու համար դատապարտված կանայք կազմում են 25 հոգի: Կանանց նկատմամբ դատավճիռը, ելնելով գործի՝ զինվորական ծառայության հետ առնչությունից, կայացրել է Անդրկովկասյան ռազմաճակատի 45-րդ բանակի (Военный Трибунал 45 Армии Закавказья) կամ ՀԽՍՀ ՆԳԺԿ գործերի Չինվորական տրիբունալը (Военный Трибунал войск НКВД Арм.ССР)՝ դատապարտվելով 3-10 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային ճամբարում: Հետաքրքրական է, որ նույն գործով, բայց մեղադրական այլ ձևակերպմամբ անցնող կանայք կան, որոնք համարվում են ավազակների կանայք, բայց գործից պարզ է դառնում, որ դրանք հիմնականում նույն դասալիքներին թաքցնողներն են, մասնավորապես հաշվի առնելով, որ նրանց դատավճիռը ևս կայացրել է Չինվորական տրիբունալը: Այդ գործերում ավելացվել է նաև անասուններ գողանալու հանգամանքը՝ դիտարկելով դա իբրև ավազակություն:

Դասալիքներին, այսինքն՝ իրենց ամուսիններին, որդիներին ու բարեկամներին չմատնած կանանց գործերում աչքի են ընկնում հայրիշխանական խոսույթի և դրացիական փոխօգնության մասին վկայություններ: Հարցաքննությունների արձանագրությունները մատնանշում են կանանց (այս դեպքում երիտասարդ կանանց) պասիվ դերակատարությունը որոշումների ընդունման գործընթացներում: Կանայք հաճախակի են ընդգծում, որ իրենց ամուսիններին տեսնելուն պես իրենք գնացել են իրենց ամուսինների հայրական տուն, հայտնել են նրանց ծնողներին և եղբորը<sup>82</sup>: Վերջիններիս գալուն պես ընտանիքով, առանց կնոջ ներկայության, սեղանի շուրջ քննարկել են դասալիքի հետագա թաքնվելու հնարավորությունները<sup>83</sup>: Կանայք դասալիքների գործերում թիրախավորվել են, քանի որ նրանք էին դասալիքներին կերակրողները և նրանց հիգիենայի պարագաներով ապահովողները: Գ. Շագոյանը, խոսելով բռնադատված ընտանիքներում օգնություն ցուցաբերելու պարագայում կանանց դերակատարման մասին, նույնպես նշում է, որ օգնություն փոխանցողները հաճախ կանայք ու երեխաներն էին<sup>84</sup>: Մի քանի դասալիքների՝ իրար հետ թաքնվելու դեպքում, ուսումնասիրվող գործերում կարելի է գտնել նաև նրանց ընտանիքների, այսինքն՝ հարևանների փոխօգնության մասին վկայություններ: Կանայք իրար մեջ էին կիսում իրենց ամուսինների/որդիների կեցությունն ապահովելու համատեղ գործողությունները. նրանց հագուստը լվանում էր մեկը, իսկ օճառով

82 Մի քանի գործերի ուսումնասիրությունից հասկանալի է դառնում, որ հաճախ ամուսիններն ապրել են նուկլեար ընտանիքներով և ոչ գերդաստաններով:

83 ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 7, Գ. 2237:

84 Շագոյան Գ., Ամբողջատիրական առօրյա (Սոցիալական հարաբերությունների փոփոխությունները ստալինյան արդիականացման պայմաններում)// Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում: Պատմություն, հիշողություն, առօրյա, Երևան, 2015, էջ 192:

ապահովում էր մյուսը<sup>85</sup>, հացը թխում էր երրորդը, իսկ այլուրով ապահովում էր մեկ այլ ընտանիք<sup>86</sup> կամ այն դեպքում, երբ տղամարդիկ մնում էին մեկի տանը, մյուսների կանայք տանում էին իրենց ամուսինների համար կերակուրը կամ լվանում էին հագուստները: Ինչպես կրկին նշում է Գ. Շագոյանը, բախտակից հարևանների համար դրացիական հարաբերությունների դերն ու կարևորությունն աճում էր նման պայմաններում, և հարևաններին բաժին էին ընկնում այն պարտականությունները, որոնք ոչ ճգնաժամային իրավիճակներում ստանձնում էին ազգականները<sup>87</sup>:

Այսպես, ելևելով հայկական նյութի այն առանձնահատկությունից, որ կանայք ավելի շատ բռնադատվել են պատերազմի տարիներին, քան Մեծ տեռորի տարիներին, կարելի է եզրակացնել, որ հորհրդային Հայաստանում, ի տարբերություն սովետական մյուս հանրապետությունների, Մեծ տեռորի տարիներին կանայք քիչ են թիրախավորվել: Այնուամենայնիվ, գործերի ուսումնասիրությունից ելևելով, պատերազմի տարիներին ի թիվս այլոց թիրախավորվել են նաև այն կանայք, որոնց հարազատները բռնաճնշումների են ենթարկվել Մեծ տեռորի ժամանակ: Պատերազմական իրավիճակում կանանց թիրախավորելու պատճառը հավանաբար այն էր, որ այդ տարիներին, հաշվի առնելով աշխատուժի պահանջարկը, պակասող թվաքանակը լրացվել է նախորդ տարիներին բռնաճնշումներից խուսափած կանանց հաշվին: Դատելով հետաքննության վարույթից, բռնադատման համար որպես առիթ են օգտագործվել նրանց ամուսինների «հանցանքը»: Մյուս կողմից, բռնաճնշումները զանգվածային են դարձել համատարած կասկածամտության պատճառով այլազգիներին թիրախավորելու հաշվին: Այս պարագայում բռնությունների զոհ են դարձել այն կանայք, որոնց կենսագրականում կասկած հարուցող ցանկացած հանգամանք կար, ինչպես օրինակ օկուպացված տարածքներից Էվակուացված լինելը:

85 ՀԱԱ, ֆ. 1191, Ց.2, Գ. 1152:

86 ՀԱԱ, ֆ. 1191, Ց.7, Գ. 198:

87 Շագոյան Գ., նշվ. աշխ., էջ 185:

# ԱԶԱՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1941-1945 թթ. կանանց դատապարտումներն ու ազատ արձակումներն՝ ըստ մեղադրանքի տեսակների (աղ. 5)

Մեղադրանքի տեսակը	Դատապարտված	Ազատված	Պայմանական մեղադրանք
չսիր	314	290	–
դասալիքներին թաքցնող/չմատնող	4	8	8
ավազակներին թաքցնող/չմատնող	5	–	–
հակասովետական քարոզչություն անող	78	12	5
անօրին. երիտ. կազմակերպության անդամ	20	4	–
լրտես	5	7	–
փախուստ աշխատավայրից կամ ազատագրկ. վայրից	7	1	–
խարդախություն, կեղծ փաստաթղթեր պատրաստող	13	2	4
հակասովետական տարր	4	–	–
Ստալինի հասցեին վիրավորանք հնչեցնող	5	1	–
այլ	4	2	–
<b>ընդամենը</b>	<b>459</b>	<b>327</b>	<b>17</b>

Աղբյուր՝ Խորհրդային Հայաստանում բռնադատվածների մասին տվյալների շտեմարան (1920-1953 թթ.)

Կանայք տղամարդկանց համեմատ ավելի հաճախ են ազատվել պատժից: Յուրաքանչյուր մեղադրանքի դեպքում ազատման համար տարբեր հանգամանքներ են դեր խաղացել: *Չսիրների* պարագայում տոկոսային առումով ամենաշատ ազատումներն են եղել: 604 անձանցից աքսորվել են **314**-ը, իսկ **290**-ն ազատվել են անմիջապես (չունեն դատավճիռ, ունեն ազատման մասին որոշում) կամ ժամկետից շուտ (ունեն և դատավճռի և ազատման մասին որոշումներ, որոնք ժամանակային կտրվածքով իրար մոտ թվեր են), այսինքն, գրեթե կեսն ազատվել են: *Չսիրների* ազատման որոշումները կայացրել են ԽՍՀՄ կամ ՀԽՍՀ ՆԳԺ-ը և ԽՍՀՄ Հատուկ խորհրդակցությունը: Վերջինս ազատման մասին որոշում է կայացրել այն դեպքում, երբ վճիռն արդեն կայացված է եղել: Այդ ընտանիքներն աքսորից ազատվել են այն պարագայում, երբ ընտանիքի հարազատներն ունեցել են Կարմիր բանակում ծառայող անձինք, եթե ապացուցվել է նրանց միջև ինսամակալությամբ կապվածությունը: Հատկանշական է, որ ուսումնասիրված գործերից գրեթե բոլորում կային Կարմիր բանակում ծառայողներ, բայց հաճախ ՆԳԺ-ը լրացուցիչ հարցաքննությունների կամ տեղեկանքների միջոցով ջանացել է ապացուցել, որ ընտանիքից որևէ մեկը չի գտնվել բանակում ծառայողի ինսամբի տակ: Կանանց պարագայում պատկառելի տարիքը երբեմն ազատում էր ամբողջ ընտանիքին կամ տվյալ անձին աքսորից: Երրորդ, աքսորավայրից փախուստի դիմելու դեպքում Հատուկ խորհրդակցությունը փախուստի դիմածին հայտնաբերելուց հետո հաճախ չեղյալ էր համարում կայացրած որոշումը: Եվ վերջապես, աքսորից երբեմն ազատվում էին այն ընտանիքները, որոնց ընտանիքի

գլխավորը դատապարտվել էր ոչ թե գնդակահարության, այլ ազատագրկման:

Դասալիքներին թաքցնող կանանց ազատումը կամ պայմանական դատապարտումը նույնպես հաճախակի է հանդիպում: Նրանց դեպքում որոշումը կայացրել է Ռազմական տրիբունալը: 25-ից դատապարտվել են 9-ը, 8-ն ազատ են արձակվել: Գործում ազատմանը նպաստող հանգամանքները մի քանիսն են եղել: Տարածված էր կանանց ֆիզիոլոգիական, տարիքային կամ սոցիալական առանձնահատկություններից ելնելով նրանց ազատումը, այսինքն՝ ծեր կանանց պարագայում նրանց պատկառելի տարիքը<sup>88</sup>, իսկ երիտասարդների դեպքում մանկահասակ երեխաներ ունենալու հանգամանքը: Բայց նույնիսկ նման հանգամանքներն ազատման որոշման մեջ միայնակ չեն ներկայացվել: Սովորաբար դրանց ուղղորդել են ՆԳԺԿ-ի՝ հարցաքննությունների միջոցով արձանագրած այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են «գիտակցության ցածր մակարդակը», «ընտանիքի անդամների կողմից բռնության սպառնալիքը», «մատնելու համար անբարենպաստ իրավիճակը» և այլն:

Չարուցված գործերից մի քանիսում շրջանառվում է ֆիզիկական բռնության կամ սպառնալիքների գնով իրենց ամուսինների (երբեմն տեգրոջ) կողմից կանանց վախեցնելու դեպքերը: Կանայք հարցաքննությունների ժամանակ հայտնում են, որ ամուսինների կամ ամուսնու ընտանիքի՝ իրենց սպանելու սպառնալիքի տակ համապատասխան մարմիններին չեն հայտնել իրենց ամուսինների դասալիքության և գտնվելու վայրի մասին: Չնայած խորհրդային Ռուսաստանի առօրեականությունը հետազոտող Շ. Ֆիցպատրիկը նշում է, որ խորհրդային տարիներին կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը բավական տարածված էր<sup>89</sup>, բռնադատվածների գործերը չեն կարող հիմք լինել այդ իրողությունն այս կանանց դեպքում փաստելու համար: Այնուամենայնիվ, կանանցից մի քանիսն ազատվել են պատասխանատվությունից՝ հաշվի առնելով նման սպառնալիքի հանգամանքը<sup>90</sup>: Գործերում առկա այս մանրամասները թույլ են տալիս հավանական համարել, որ իրենց ամուսինների կողմից սպառնալիքի ենթարկված կամ իրավիճակն այդպես ներկայացնող կանանց համար այդ «փաստն» օգտագործվել է ազատ արձակվելու համար:

Շրջանառվող մյուս սյուժեի պատկան մարմիններին դասալիքների մասին հայտնելու «ոչ հարմար պայմաններն» էին: Ուսումնասիրված գործերից երկուսում նշվում է, որ կանայք ունեին իրենց հարազատներին ՆԳԺԿ-ին հանձնելու մտադրություն, սակայն վախենալով մթանը տնից դուրս գալ, չեն հասցրել իրագործել իրենց մտադրությունը<sup>91</sup>:

Արխիվային փաստաթղթերում առկա են նաև գործում հստակ արձանագրված իրական մատնությունների եզակի դեպքեր, որոնք նույնպես կանանց ազատել են պատասխանատվությունից: Գործերից մեկում միևնույն անձին թաքցնելու համար մեղադրվել են երկու կանայք, որոնցից մեկին ազատել են, քանի որ վերջինիս մանկահասակ աղջկա ցուցումով են բացահայտել դասալիքների թաքստոցը: Այդ

88 ՉԱԱ, ֆ. 1191, Ց. 7, Գ. 217 և Ց. 16, Գ. 540:

89 Фицпатрик Ш., Повседневный Сталинизм. Социальная история Советской России в 30-е годы: город, М., 2008, с. 193.

90 ՉԱԱ, ֆ. 1191, Ց. 7, Գ. 2237 և Գ. 1152:

91 ՉԱԱ, ֆ. 1191, Ց. 7, Գ. 1945 և Ց. 7, Գ. 263:

մասին առանձին փաստաթղթով Ղարաբաղյարի շրջանի<sup>92</sup> ՆԳԺԿ-ը հայտնում է ՀԻՍՀ ՆԳԺԿ-ի կենտրոնական բաժանմունքին<sup>93</sup>: Եվ վերջապես, երբեմն, երբ գործում առկա են դասալքություն կատարած անձի եղբայրն ու կինը, մեղադրանք ներկայացվել է միայն եղբոր նկատմամբ:

Հայրիշխանական համակարգում կնոջ ենթակա կարգավիճակը դասալիքին թաքցնելու կամ չմատնելու գործում, մանկահասակ երեխաներ ունենալու հանգամանքը՝ որպես անաշխատունակ լինելու ապացույց, որոշ դեպքերում դասալիքներին չմատնող կանանց հնարավորություն է տվել խուսափել բռնությունից: Սա խոսում է այն մասին, որ կինը չէր դիտարկվում որպես սուբյեկտ, նա ոչ միայն ընտանիքում էր ստորադասված որոշում կայացնելու համար, այլ տեղական իշխանությունները նույնպես հաշվի էին առնում նրա այդ կարգավիճակը և չէին դիտարկում նրան որպես հանցանքի գլխավոր դերակատար և պատասխանատվություն կրող մեկը:

Կանանց ազատումները ըստ ազգային պատկանելության դիտարկելիս հարկ է ընդգծել, որ ազատումների որոշումները գերակշռում են այն մեղադրանքներում, որոնցում հիմնականում հայ և ադրբեջանցի կանայք են ընդգրկված<sup>94</sup>, իսկ մյուս մեղադրանքների դեպքում, երբ բռնաճնշվել են այլազգի կանայք, նրանց ազատումներն ավելի եզակի են եղել՝ բացառությամբ լրտեսության մեղադրանքով դատապարտվողների:

Բռնադատված կանանց զրկանքները չեն ավարտվել նրանց ազատ արձակելուց հետո: Նույնիսկ դրանից հետո պետական և սոցիալական խտրականությունը նրանց նկատմամբ շարունակվել է: Նրանք որպես «Ժողովրդի թշնամիների» ընտանիքի անդամներ ենթարկվել են սոցիալական խտրականության<sup>95</sup> և զրկվել են պետական արտոնություններից և ունեցվածքից (բնակարանից, կուսակցական պատկանելությունից և այլն): Վերևում հիշատակված Նինա Պոնամարյովան իր նամակում նշում է, որ աքսորից վերադառնալուց հետո նրան թույլ չեն տվել հաստատվել քաղաքում, և նա ստիպված տեղափոխվել է Ապարանի շրջան<sup>96</sup>: Հալածանքներն ու արտաքսման ենթարկելը տարածվել է նաև նրա երեխաների վրա: Մ. Իլիչը, հղելով Բ. Ֆրիերսոնի ու Ս. Վիլենսկիի «Գուլագի երեխաները» աշխատությունը, առանձնացնում է տեռորի «**ուղղակի**» զոհերին, որոնք անմիջապես բռնաճնշումների են ենթարկվել և «**անուղղակի**» զոհերին՝ սովորաբար բռնադատվածների ընտանիքի անդամները, որոնք բռնաճնշումների

92 Վարչական շրջան ՀԻՍՀ-ում, որը գոյություն է ունեցել 1937-1951 թթ.: Տարածվել է Մարտունու, Միկոյանի (եղեգնաձորի) շրջանների միջև: Տես՝ Հակոբյան Թ., Մելիք-Քախչյան Ստ., Բարսեղյան Ս., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Ե., 1986-2001:

93 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 7, Գ. 263:

94 Դրանք են չսիր և դասալիքներին չմատնող կատեգորիաները: Առաջինում 290 ազատվողներից 210-ը հայ էին, իսկ 73-ն՝ ադրբեջանցի, իսկ երկրորդի դեպքում 8 կալանքից ազատվածներից 3-ը հայ են, 5-ն՝ ադրբեջանցի: Բացի այդ հակասովետական քարոզչություն անող կանանցից, որում 95-ից 42-ն են հայ, ազատվածների մեծ գերակշռողը նույնպես հայ կանայք են:

95 Տե՛ս՝ Коренюк В., Суслов А., Военная повседневность детей репрессированных родителей в годы Великой Отечественной войны (На материалах Молотовской области)// Вестник Томского государственного университета. История, N 6(44), 2016, сс. 44-52: Հոդվածում նկարագրվում է «Ժողովրդի թշնամի» կատեգորիան կրող բռնադատված և ոչ բռնադատված երեխաների առօրյան, որի մաս է կազմել նաև սոցիալական դիսկրիմինացիան:

96 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 4, Գ. 648:

չեն ենթարկվել, սակայն կրել են դրանց հետևանքները<sup>97</sup>: Այնուամենայնիվ, սույն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անուղղակի զոհերը ևս կարող էին թիրախավորվել՝ հետագայում դառնալով բռնությունների ուղղակի զոհ: Նրանք հաճախ դիսկրիմինացիայի են ենթարկվել և դրա հետ մեկտեղ հետագայում նաև բռնաճնշումների հերթական զոհ են դարձել: Հենց այդ հանգամանքներից ելնելով են ազատ արձակվելուց հետո կանանցից շատերը դիմել արդարացման համար՝ իրենց նամակներում խնդրելով հեռացնել իրենց անունից «այդ ամոթալի սև բիծը»<sup>98</sup>:

Այսպես, պատերազմի տարիներին կանանց ազատման ցուցանիշները բարձր են եղել: Տամբովի շրջանում պատերազմի տարիներին նույնպես մյուս տարիների համեմատ նկատվում է ազատումների բարձր ցուցանիշ՝ 10%<sup>99</sup>, իսկ ՀԽՍՀ-ում այն եղել է շատ ավելի բարձր՝ 40%: Կարելի է եզրակացնել, որ պատերազմական շրջանում կանանց ազատումները տղամարդկանց համեմատ ավելի հաճախակի են եղել մի կողմից՝ նրանց քաղաքականապես պասիվ լինելու, մյուս կողմից՝ վերարտադրողական գործառույթից և անաշխատունակ տարիքի հետ կապված: Բացի այդ, ըստ ազգային պատկանելության, հայ և ադրբեջանցի կանանց ազատման որոշումն այլազգի կանանց նկատմամբ ավելի հաճախ է կայացվել:

---

97 Չոլումը ըստ՝ Melanie Ilic, “Women’s Experiences of 1937: Everyday Legacies of the Purges and the Great Terror in the Soviet Union,” էջ 13-43:

98 ՉԱԱ, Ֆ. 1191, Ց. 11, Գ. 1259, 1260 և Ց. 12, Գ. 1871, 1872, 1873:

99 Дьячков В., նշվ. աշխ., էջ 263:



# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ աշխարհամարտի տարիներին կանանց նկատմամբ բռնությունները միաժամանակ տնտեսական և քաղաքական նպատակներ էին հետապնդում: Մի կողմից տղամարդկանց աշխատուժի ծավալների զգալի կրճատումը, մյուս կողմից սեփական քաղաքացիների և հատկապես օտարազգիների նկատմամբ համատարած կասկածամտությունը կանանց նկատմամբ բռնությունների երկրորդ խոշոր ալիքի պատճառ դարձան:

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել ԽՍՀՄ ողջ տարածքում գործող բռնությունների մի քանի օրինաչափություններ և ՀԽՍՀ բռնադատման որոշ առանձնահատկություններ: Դիտարկվող բոլոր տարածաշրջաններում 1941-1945 թթ. կանանց բռնաճնշումների դիմամիկան նախորդ տարիների համեմատ աճ է գրանցել: Սակայն, ի տարբերություն մյուս տարածաշրջանների, Խորհրդային Հայաստանում կանանց բռնություններն ավելի մեծ ծավալներ են ունեցել 1930-ականների համեմատ:

Խորհրդային Հայաստանում պատերազմի ժամանակ կանանց նկատմամբ բռնությունների ցուցանիշի համեմատական գերազանցության հետ մեկտեղ, նրանց ազատման ցուցանիշը ևս բարձր է եղել Տամբովի շրջանի ցուցանիշներից: Մյուս կողմից, ի տարբերություն տղամարդկանց, կանայք ավելի հաճախ են ազատ արձակվել: Այս հանգամանքը կարող էր հիմնավորվել ինչպես ֆիզիկական առանձնահատկություններով, ինչպիսին էր ծերությունը, երեխայի առկայությունը, այնպես էլ որոշ մշակութային առանձնահատկություններով (կնոջը սուբյեկտ չդիտարկելու նահապետական մոտեցմամբ) և պետությանը բարեխիղճ ծառայելով (պատերազմում շքանշան ստացած ընտանիքի անդամ ունենալու դեպքում):

Հետազոտությունը նաև թույլ է տալիս վեր հանել պատերազմի տարիներին բռնաճնշումներ իրականացնելու և ազատ արձակման մեջ ազգային պատկանելության գործոնի դերակատարումը: Եթե պատերազմի տարիներին բռնադատված տղամարդկանց մեջ գերակշռում էին տեղացիները, ապա կանանց պարագայում ճիշտ հակառակն էր. երկրում այլազգի կանանց ներկայացվածության և բռնաճնշվածների թվի հարաբերակցությունից ելնելով՝ նրանց նկատմամբ բռնություններն առավել զանգվածային բնույթ են կրել: Հայ և ադրբեջանցի կանանց թվաքանակը բռնադատվածների մեջ ներկայացուցչական է եղել *չսիր* և դասալիքներին/ավագակներին թաքցնող/չմատնող կանանց հաշվին: Մյուս մեղադրանքների առնչությամբ հիմնականում ձերբակալվել են այլազգի կանանց: Մյուս կողմից, ավելի շատ ազատումներ են շնորհվել *չսիրներին*, դասալիքներին չմատնողներին, այսինքն կրկին հայ և ադրբեջանցի կանանց, իսկ այլազգիների մեջ՝ լրտեսության մեջ մեղադրվողներին: Օտարազգի կանայք Խորհրդային Հայաստանում կրկնակի օտար էին (և՛ քաղաքականապես, և՛ ազգությամբ), ինչը նրանց ավելի խոցելի էր դարձնում:

Ինչ վերաբերում է կանանց առաջադրված մեղադրանքներին, դրանցում *չսիրների* գործերն առանձնանում են մյուսներից՝ ըստ հետաքննության և դատապարտման բնույթի: Այդ կանանց և երեխաներին աքսորելու համար

ՆԳԺԿ-ը բավարարվել է ընտանիքի տղամարդու «հայրենիքի դավաճանության» հանգամանքով: Մյուս մեղադրանքներում, որոնցում հիմնականում բռնության թիրախ են դարձել նախկինում բռնադատվածների կանայք կամ պատերազմական իրավիճակի և պատերազմող երկրների կողմից տարածքների գրավման պատճառով տեղափոխությունների զոհ դարձած անձինք, ՆԳԺԿ աշխատակիցները ջանացել են նրանց որևէ ուղղակի հանցանք վերագրել: Այդ առումով 1940-ական թթ. պատերազմական դրությունը պարարտ հող էր նախապատրաստել «անվստահելի տարրերի» նկատմամբ բռնություններ սանձազերծելու: Հատկապես լրտեսության, կեղծ լուրերի տարածման և պրոֆաշիստական քարոզչության մեղադրանքներով ձերբակալված կանանց թիվը նախապատերազմյան տարիների համեմատ զգալիորեն աճել էր, իսկ *չսիրների* և դասալիքներին թաքցնող/չմատնող կանանց թիրախավորումը հնարավոր էր միայն պատերազմական իրավիճակում:

Մեղադրանքի տեսակը	հայ			ադրբեջանցի			ռուս			բուլղ, չեղի			գերմանացի			հրեա			ուկրաինացի			լեհ			խտայաց			օս			հոլմ			լատիշ թուրք		
	Նրբ	ժմնժ ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	ժմնժ ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	ժմնժ ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	ժմնժ ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	ժմնժ ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	ժմնժ ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	ժմնժ ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	ժմնժ ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	ժմնժ ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	ժմնժ ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ	Նրսն ճղ-ԷղղլԷ					
Զիդ	365	56	-	168	1	5	6	-	3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
դասալիբների կանայք	10	3	-	7	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
ավագանիների կանայք	1	-	-	4	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
հավատվեալական քարոզչություն	14	28	-	3	-	7	25	-	-	-	-	-	3	2	1	-	2	1	-	2	1	-	3	2	1	-	2	1	-	-	-	-				
կազմակերպության անդամներ	3	16	-	-	-	-	3	2	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-			
ըրեսներ	-	1	-	-	-	1	2	1	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-			
փախուստ	1	-	-	-	-	5	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-			
խարդախություն, կեղծ փաստաթղթերի պատրաստում	2	7	2	-	-	-	4	2	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-			
հավատվեալական տարր	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-			
վիրավորանքներ Ստալինի հասցեին	2	3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		
այլ	1	1	-	-	-	-	2	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		
ընդամուտ	517	365	56	168	1	5	6	-	3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-			
ազգություններն ըստ մայրախամարի	1061997	130896	51464	20481	433	512	5496	240	7	263	4181	23	18	5.50%	0.04%	0.13%	0.12%	0.01%	2.30%	1.36%	0.12%	1.25%	14%	0.30%	0.04%	4%	5.50%									

Sources: 1939 All-Union census. The national composition of population by the republics of the USSR Database of the victims of Soviet repressions in Armenia (1920-1953)

Annex 2. The state body responsible for conducting trials and the duration of the sentence of repressed women, by the type of accusation

Դատախաչարտող օրգանը																
Մեղադրանքի տեսակը	Special Assembly of USSR NKVD/MGB (exile)				(Выездная сессия) Военный Трибунал войск НКВД Арм. ССР/45 Армии Зафронта/ СССР				ОС при НКВД СССР (ազատազրկում)		Судебная Коллегия по Уголовным делам Верховного Суда Арм. ССР		Нарсуд Кироваканского р-на	Президиум Верхов. Совета Арм. ССР	տվյալները բացակայում են	
	Դատախաչարտող 5 տ.	Դատախաչարտող 5 տ.	Դատախաչարտող 5 տ.	5տ. արտաքին տեղափոխված կազմակերպության անդամներ	1-5 տ. ՈւՍԵ	6-10 տ. ՈւՍԵ	3-10 տ. ազատազրկում	2-7 տ. բանտարկում	1-5 տ. ՈւՍԵ	6-10 տ. ՈւՍԵ	1-5 տ. ՈւՍԵ	6-10 տ. ՈւՍԵ				1-5 տ. ՈւՍԵ
Հիդր	17	3	294	314												
դատախաչարտողի կանաչ	4	1		4	3											
ավագանիների կանաչ	5			5		5										
հակատվեցական բարոցություն	78			78	2	14	34	2	2	6	1	5	13		1	
կազմակերպության անդամներ	20			20	1	2	3		1	3	6	4				
լրտեններ	5		1	5			2		1	1						
փախուստ	7			7	4	2	1	1								
խարդախություն, կերծ փաստաթղթերի պատրաստում	13			13	6	4	1	1								1
հակատվեցական տարր	4			4			3	1								
վիրավորանքներ Ստալինի հասցեին	5			5		1				1					1	
այլ	4			4	1							1	1	1	1	
ԸՆդամներ			319				89			15		32			1	1

Source: Database of the victims of Soviet repressions in Armenia (1920-1953)

